Միջնորմների փաստացի բեռնվածքի որոշում		
Խտություն, կգ/մ ³		1200
Տիպարային հարկի բարձրություն, մմ		3300
Միջնորմներ, գծմ	100 մմ	165
	200 մմ	88
Հարկի մակերեսը, մ ²		524
Միջնորմների քաշը՝ $m = \rho \cdot v$, կՆ		1350
Բեռնվածք, կՆ/մ ²		2,577

Շենքի կրող կոնստրուկցիաները միաձույլ երկաթբետոնից են, որոնց հատվածքները ներկայացված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Վերլուծության համար պահանջվող ելակետային տվյալներ

Կրող տարրերի երկրաչափական չափեր	
Միաձույլ սյուներ, սմ	60x60, 60x80
Միաձույլ պարզունակներ, սմ	55x60
Միաձույլ ե/բ պատեր, սմ	40, 30
Ծածկի սալ, սմ	20, 18
Ծանր բետոն	
Բետոնի դաս	B25
Միջին խտություն, կգ/մ ³	2500
Առաձգականության մոդուլ, E_b , ՄՊա	30000
Սեղմման հաշվարկային դիմադրություն, R_b , ՄՊա	14,5
Ամրան	
Ամրանի դաս	A500
Չզման հաշվարկային դիմադրություն, R_s , ՄՊա	375
Ամրանի առաձգականության մոդուլ, E_s , ՄՊա	200000
Սեղմման հաշվարկային դիմադրություն, R_{sc} , ՄՊա	375

Հաշվարկը կատարված է կոնստրուկցիաների սեփական քաշի, մշտական, ժամանակավոր երկարատև ու կարճատև բեռնվածքների և սեյսմիկ ազդեցության (X և Y ուղղություններով) հաշվառմամբ [3-6]:

Աղ. 3-ում ներկայացված են ուսումնասիրվող կառույցի վրա ընդունված հաշվարկային բեռնվածքների արժեքները: Կառույցի կոնստրուկտիվ տարրերի հաշվարկը կատարվել է բեռնվածքների հիմնական և հատուկ զուգակցումներով՝ հորիզոնական սեյսմիկ բեռնվածքների հաշվառմամբ: Սեյսմիկ բեռնվածքները որոշելիս զուգակցման գործակիցներն ընդունվել են. մշտական՝ 0,9, ժամանակավոր երկարատև՝ 0,8, ժամանակավոր կարճատև՝ 0,5: Շենքի հաշվարկի գործակիցները վերցված են ըստ ՀՀՇՆ 20-04 նորմատիվ փաստաթղթի:

Աղյուսակ 3

Հաշվարկային բեռնվածքների արժեքները

Բեռնվածքների տեսակները		Նորմատիվային բեռնվածք, կՆ/մ ²	Բեռնվածքի հուսալիության գործակից, γ	Հաշվարկային բեռնվածք, կՆ/մ ²
<i>Մշտական</i> հատակի շերտեր և առաստաղ		1,7	1,1	1,87
Դիտարկվել է միջնորմների 3 տարբեր բեռնվածքներ	տարբերակ 1, (ըստ ՇՈՒՍ 2.01.07-85*)	0,5	1,2	0,60
	տարբերակ 2, (ըստ նախագծողների)	1,5	1,2	1,80
	տարբերակ 3, (փաստացի)	2,6	1,2	3,12
<i>Ժամանակավոր</i>				
կարճատև		0,3	1,2	0,72
երկարատև		1,2	1,2	1,44

Արդյունքներ և քննարկում

Վերջավոր տարրերի մեթոդի կիրառմամբ և LIRA-FEM ծրագրային փաթեթի միջոցով կատարվել են հաշվարկներ: Հաշվարկային մոդելավորումն իրականացվել է երեք տարբեր սցենարներով՝

- մոդելավորում ըստ ՇՈՒՍ 2.01.07-85* նորմատիվային փաստաթղթի,
- մոդելավորում ըստ նախագծողների կողմից ընդունված միջինացված արժեքի,
- մոդելավորում ըստ ՀՀՇՆ 20.02-2024 նորմատիվ փաստաթղթի պահանջների:

Աղ. 4-ում ներկայացված են հաշվարկներով ստացված հիմնական տվյալները՝ տատանման պարբերությունը, առավելագույն տեղափոխությունը, սյուների և պարզունակների առավելագույն ամրանավորման տոկոսը և դիաֆրագմաների առավելագույն ամրանավորման մակերեսը [7-9]:

Աղյուսակ 4

Մշտական և ժամանակավոր բեռնվածքների արժեքները

Հ/հ	Բնութագրեր	Առաջին տարբերակ	Երկրորդ տարբերակ	Երրորդ տարբերակ
		միջնորմների բեռնվածք ըստ ՇՈՒՍ 2.01.07-85*	նորմատիվ բեռնվածք 150 կգ/մ ²	դիտարկվող շենքի միջնորմների փաստացի բեռնվածք
1	Տատանման պարբերություն, վ	1,142	1,173	1,206
2	Առավելագույն տեղափոխություն, մմ	54,200	55,800	57,600
3	Սյան առավելագույն ամրանավորման տոկոս, %	3,200	3,480	3,770
4	Պարզունակի առավելագույն ամրանավորման տոկոս, %	2,270	2,420	2,460
5	Դիաֆրագմայի առավելագույն ամրանավորման մակերես, սմ ²	64,800	66,800	69,300

Հաշվարկի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ երրորդ տարբերակի տվյալները մեծացել են՝ համեմատ առաջին և երկրորդ տարբերակների: Մասնավորապես, տատանման պարբերությունը մեծացել է 5,6 % -ով, առավելագույն տեղափոխությունը՝ 6,27 % -ով, սյան առավելագույն ամրանավորման տոկոսը՝ 17,81 % -ով, պարզունակի առավելագույն ամրանավորման տոկոսը՝ 8,37 % -ով, իսկ դիաֆրագմայի առավելագույն ամրանավորման մակերեսը՝ 6,94 % -ով: Շատ դեպքերում նորմատիվային փաստաթղթերով ներկայացված նվազագույն արժեքներով ստացված լարվածադեֆորմատիվ վիճակը չի արտացոլում իրական պատկերը: Այս տվյալները հիմնավորում են այն հանգամանքը, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր շենքի համար առանձին դիտարկել միջնորմների դիրքը, քանակը, բաշխվածությունը և այլ բնութագրիչներ, որոնք կարող են ազդել բեռնվածքի մեծացման վրա: Ուստի շատ կարևոր է, առավելապես բազմահարկ շենքերի դեպքում, ստուգիչ հաշվարկներ իրականացնել փաստացի բեռնվածքներով: Կրող համակարգերի ծավալատարածական պահանջների նվազագույն դրույթների խախտումները հանգեցնում են ոչ ընկրկելի համակարգերի առաջացմանը, ինչը լուրջ ազդեցություն ունի կառուցվածքների ընդհանուր կրողունակության վրա [10-12]:

Եզրակացություն

Մանրամասն դիտարկումները դինամիկ բնութագրերի և ամրանավորման տոկոսների միջև հանգեցրեց հետևյալին. առաջին մոդելից դեպի երրորդ մոդել անցումը հանգում է ամրանավորման տոկոսի աճի, միաժամանակ առաջացնելով զգալի տեղափոխություններ և տատանման պարբերություններ:

Տնտեսաշահավետության տեսակետից ավելի շատ ամրանավորումը կարող է բարձրացնել շինարարության արժեքը: Սակայն այս բարելավումները կարող են երկարաժամկետ խնայողությունների բերել, նվազեցնելով վերանորոգման և սպասարկման անհրաժեշտությունը, հատկապես՝ սեյսմիկ ակտիվ տարածքներում:

Վերը նշված դիտարկումները կարող են օգնել կոնստրուկտորներին և ճարտարապետներին նյութերի օգտագործման, նախագծման և արժեքի կառավարման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ՝ նպաստելով շենքերի և կառուցների անվտանգության և արդյունավետության բարձրացմանը:

Գրականության ցանկ

- [1] **СНиП 2.01.07-85***. Нагрузки и воздействия, ФГУП ЦПП, Москва, 2005, 44 с.
- [2] **ՀՀՇՆ 20-04-2020**. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր, Երևան, 2020, 93 էջ:
- [3] **ՀՀՇՆ 52-01-2021**. Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ, Երևան, 2020, 213 էջ:
- [4] **ՀՀՇՆ 20-02-2024**. Բեռնվածքներ և ազդեցություններ, Երևան, 2020, 212 էջ:
- [5] **Տ.Լ. Դադայան, Լ.Գ. Կարապետյան**, Կառուցվածքների սեյսմակայունություն, Երևան, 2021, 148 էջ:
- [6] **Լ.Գ. Կարապետյան, Տ.Լ. Դադայան**, Համակարգչային տեխնոլոգիայի միջոցով բազմահարկ շենքի հաշվարկը սեյսմիկ ազդեցության դեպքում, Երևան, 2007, 32 էջ:

- [7] **S.L. Դադաշյան**, Երկաթբետոնե շրջանակային հիմնակմախքով բնակելի շենքի շրջանակի հաշվարկը սեյսմիկ ազդեցության դեպքում, Երևան, 2014, 140 էջ:
- [8] **Հ.Հ. Բաբայան**, Երկաթբետոնե կոնստրուկցիաներ, Երևան, 1984, 366 էջ:
- [9] **В.М. Бондаренко, А.И. Судницын, В.Г. Назаренко**, Расчет железобетонных и каменных конструкций, Высшая школа, Москва, 2006, 504 с.
- [10] **В.Н. Байков, Э.Е. Сигалов**, Железобетонные конструкции. Общий курс, Стройиздат, Москва, 1991, 767 с.
- [11] **С. Чернов**, Метод конечных элементов в расчетах стержневых систем, LAP, 2012, 248 с.
- [12] **А.К. Chopra**, Dynamics of Structures, Fifth Edition, Pearson, 2019, 980 p.

ВЛИЯНИЕ РАСПРЕДЕЛЕНИЯ ПЕРЕГОРОДОК НА ДИНАМИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ МНОГОЭТАЖНЫХ ЗДАНИЙ

Լուսինե Գուրգենովնա Կարապետյան, Արման Տեաօկովիչ Մարգարյան*

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**armanmargaryan25@gmail.com*

Представлено изменение динамических характеристик здания под влиянием фактической нагрузки от перегородок, заданной проектными решениями межэтажных перекрытий в многоэтажных зданиях, по сравнению с вариантом равномерно распределенной нагрузки, обычно применяемой в проектах. Важно учитывать реальное моделирование нагрузки от перегородок, особенно в сейсмоактивных зонах, таких как вся территория Республики Армения. Точное распределение статических нагрузок, действующих на здания и сооружения, может сыграть решающую роль при оценке динамических характеристик. В качестве основных динамических характеристик здания сравнивались период свободных колебаний и межэтажные смещения. Сравнения показали, что динамические характеристики и процент армирования значительно увеличиваются при варианте с реальными перегородками для 16-этажного здания с одинаковыми архитектурно-планировочными решениями.

Ключевые слова: *перегородка, железобетонная конструкция, нагрузка, рамно-связевая система, динамические характеристики*

THE IMPACT OF PARTITION DISTRIBUTION ON THE DYNAMIC CHARACTERISTICS OF MULTI-STORY BUILDINGS

Lusine Karapetyan, Arman Margaryan*

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**armanmargaryan25@gmail.com*

The changes in a building's dynamic characteristics due to the actual partition load specified by the design solutions of inter-floor slabs in multi-story buildings are presented, compared to the commonly used uniformly distributed load option in designs. The realistic modeling of partition loads is crucial, especially in seismically active zones such as the entire territory of the Republic of Armenia (RA). The accurate distribution of static loads acting on buildings and structures can play a decisive role in evaluating dynamic

characteristics. The main dynamic characteristics compared were the natural vibration period and inter-story drifts. Comparisons showed that for the third variant of a 16-story building with the same architectural and planning solutions, the dynamic characteristics and reinforcement percentage significantly increase.

Keywords: partition, reinforced concrete structure, load, frame-bracing system, dynamic characteristics

Վարապետյան Լուսինե Գուրգենի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական կոնստրուկցիաներ ամբիոն (+374)94420080, karapetyan.lusin@gmail.com, **Սարգսյան Արման Սևակի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական կոնստրուկցիաներ ամբիոն, դասախոս, (+374)77248958, armanmargaryan25@gmail.com

Карапетян Лусине Гургеновна, канд.техн.наук, доцент (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Строительных конструкций, (+374)94420080, karapetyan.lusin@gmail.com, **Маргарян Арман Севакович** (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Строительных конструкций, преподаватель, (+374)77248958, armanmargaryan25@gmail.com

Karapetyan Lusine, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) - NUACA, Chair of Building Structures, (+374)94420080, karapetyan.lusin@gmail.com, **Margaryan Arman** (RA, Yerevan) - NUACA, Chair of Building Structures, Lecturer, (+374)77248958, armanmargaryan25@gmail.com

Ներկայացվել է՝ 03.02.2025թ.

Գրախոսվել է՝ 06.03. 2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2025.1-04>

ԳԵՈՂԵԶԻԱ

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՀՈՂԱԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱԳՐՈԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ**

Սամվել Զալիբեկի Կրոյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք Երևան, ՀՀ
kroyan.samvel@mail.ru*

Աշխատանքում դաշտային և լաբորատոր հետազոտությունների համադրման մեթոդով հետազոտվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման սկզբունքներին վերաբերող հիմնահարցերը: Ուսումնասիրություններից բացահայտվել է, որ հաշվի առնելով հողակադաստրային շրջանացման առանձնահատկությունները, ՀՀ տարածքում առանձնացվել են հինգ հողակադաստրային մարզեր և մի շարք շրջաններ: Հաստատված է, որ հողակադաստրային շրջանացումը հիմք է հանդիսանալու հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման, հողօգտագործման, բնապահպանական և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

Բանալի բառեր. *հողատեսք, հողակադաստրային շրջանացում, ագրոարտադրական խմբավորում, տաքսոնոմիական միավոր, հողային ֆոնդ*

Ներածություն

Հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումը հնարավոր է միայն հողի բերրիության համապարփակ ագրոնոմիական բնութագրմամբ, գնահատմամբ և հողատարածքների ճիշտ հաշվառմամբ, որն իրականացվում է միայն հողակադաստրային շրջանացման և հողերի ագրոարտադրական խմբավորման ֆոնի վրա: Դրանց լուծման արդյունավետ մեթոդներից են համարվում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հողակադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման սխեմաների կազմումը: Հողերի հողակադաստրային շրջանացումը հիմք է հանդիսանում գյուղատնտեսական մշակաբույսերի ճիշտ տեղաբաշխման համար՝ հաշվի առնելով դրանց ունեցած պահանջները հողի և շրջակա միջավայրի բնական պայմանների նկատմամբ, ինչպես նաև հողատեսքերի կադաստրային գնահատման և հողերի արտադրողականության բարձրացման ու պահպանությանն ուղղված միջոցառումներ մշակելիս: Կազմված նոր սխեմայում փոփոխություններ են մտցվել որոշ հողակադաստրային շրջանների սահմանների անցկացման և անվանումների առումով:

Վերը նշված հիմնավորումները վկայում են այն մասին, որ ներկայացված հողվածք արդիական է և բխում է ժամանակակից պահանջներից:

Նյութեր և մեթոդներ

Հայաստանի Հանրապետության հողերի հողակադաստրային շրջանացման ժամանակ առաջնորդվել ենք ՀՀ հողային օրենսգրքի Հոդված 30-ի Հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման և նորմավորման պահանջներին համապատասխան, ինչպես նաև օգտագործվել է ՌԴ Վ.Վ. Դոկուչանի անվ. հողագիտության ինստիտուտի առաջատար մասնագետների կողմից մշակված հողերի ագրոնոմիական բնութագրերի կազմման մեթոդական առաջարկությունները [1-3]:

Արդյունքներ և քննարկում

Ագրոկլիմայական ռեսուրսները և հողի բնութագրերը գնահատելու և գործնականում օգտագործելու նպատակով հանրապետության հողային ֆոնդի հողակադաստրային շրջանացման կատարելագործված սխեմայով իրականացվել է հողերի հողակադաստրային շրջանացում և ագրոարտադրական խմբավորում: Տվյալ դեպքում շրջանացման յուրաքանչյուր տաքսոնոմիական միավորի շրջանակներում տարածքների միավորումը հիմնված էր տարածքի բնական պայմանների եզակիության և գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ֆոնդի օգտագործման բնույթի վրա [4, 5]:

Հողակադաստրային մարզի առանձնացման համար հաշվի է առնվել տարածքի երկրաձևագիտական, հիդրոերկրաբանական, լեռնագրական և ձևակառուցվածքային հատկանիշները բնութագրող առանձնահատկությունները, հողառաջացնող մայրական ապարների կազմը, գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ծածկույթի օգտագործման և բարելավման վիճակը, ինչպես նաև ագրոկլիմայական ցուցանիշները, որոնք պայմանավորում են ծագումնաբանորեն և արտադրողականորեն միմյանց մոտ տեսակի հողատիպերի ձևավորումը:

Հողակադաստրային շրջաններն առանձնացնելիս հաշվի են առնվել տարածքի լեռնագրական և ագրոկլիմայական պայմանների բարդության և միատարրության աստիճանը, որը բնութագրվում է որոշակի բնական և էկոլոգիական պայմաններով, որոնք հանգեցնում են ծագումնաբանական և արտադրողական տեսակետից մոտ հողատիպերի և ենթատիպերի առաջացմանը: Միաժամանակ հաշվի են առնվում նաև գյուղատնտեսական արտադրության մեջ հողային ռեսուրսների օգտագործման կոնկրետ եղանակները [6-8]:

Հողատեսքերի ագրոարտադրական խմբերն առանձնացնելիս հաշվի են առնվում հողերի տաքսոնոմիական այն միավորները, որոնք բնութագրվում են գյուղատնտեսական մշակաբույսերի ընդհանուր էկոլոգիական պայմաններով և իրականացվող ագրոտեխնիկական և հողաբարելավման միջոցառումների միատեսակությամբ:


Հողերի ագրոնոմիական խմբերն առանձնացնելիս որպես հիմնական չափորոշիչներ ընդունվել են հողերի ախտորոշիչ տվյալները: Հաշվի են առնվել նաև լանջերի զառիթափությունն ու տարածքի մասնատվածությունը, ջրահեռացման առանձնահատկությունները, մայրական ապարների ծագումն ու բնույթը [9]:

Քանի որ հանրապետության վարչատարածքային միավորների սահմաններն անցկացվում են հիմնականում բնական սահմաններով, հողակադաստրային շրջանների սահմանները հիմնա-

կանում համընկնում են վարչական միավորների սահմանների հետ: Կոնկրետ որևէ վարչատարածքային միավորների համար նման շրջանացումը հնարավորություն է տալիս որոշել հողատեսքերի օպտիմալ հարաբերակցությունները և պահուստային պաշարները գյուղատնտեսական արտադրության ընդլայնման համար, գնահատել հողի բերրիությունը տվյալ տարածքի կոնկրետ պայմաններում, տարբերակել ագրոտեխնիկական և հողաբարելավման միջոցառումների անցկացումը և որոշել դրանց արդյունավետության արեալները [10]:

Հիմնվելով հողի ծագումնաբանական տիպերի, ենթատիպերի, սեռերի, ինչպես նաև հանրապետության առանձին շրջանների բնակլիմայական պայմանների վերաբերյալ առկա նյութի վերլուծության և ընդհանրացման վրա, նպատակ ունենալով համակողմանիորեն բնութագրել հողի բերրիության տարրերը կոնկրետ վարչական և տնտեսական շրջանների համար, կատարվել է տարածքի գիտականորեն հիմնավորված բաժանում հողակադաստրային մարզերի և շրջանների, իսկ հողակադաստրային շրջանների սամաններում առանձնացվել են հողերի ագրոարտադրական խմբերը [11]:

Այսպիսով, շրջանացման վերը նշված սկզբունքների հիման վրա հանրապետության տարածքում առանձնացվել են հետևյալ հողակադաստրային մարզերը, շրջանները և հողերի ագրոարտադրական խմբերը, որոնց բնութագրերը տրված են ստորև, համաձայն դասակարգման նոր միջազգային WRB համակարգի [12]: Ըստ նշված դասակարգման հանրապետության տարածքում առանձնացվել են հինգ հողակադաստրային մարզեր [13]: Դրանք են (նկար՝



Նկ. Հայաստանի Հանրապետության հողակադաստրային շրջանացման քարտեզ-սխեմա

Յուրաքանչյուր հողակադաստրային մարզի սահմաններում առանձնացվել են հողակադաստրային շրջանները:

Արարատյան հողակադաստրային մարզի մեջ ընդգրկված են հետևյալ հինգ շրջանները՝ Արարատյան դաշտ, Կարմրաշեն – Եղվարդի, Ուրծ – Վայքի, Երանոս – Արվայի, Ապարան – Հրազդանի:

Շիրակ հողակադաստրային մարզի մեջ ընդգրկված են հետևյալ երկու շրջանները՝ Ախուրյանի և Աշոցքի:

Հյուսիս-Արևելյան մարզում ընդգրկված են Լոռվա, Ստորին Աղստև-Դեբեդի, Վերին Աղստև-Դեբեդի, Գուգարքի և Փամբակ - Միափորի շրջանները:

Սևանի ավազան հողակադաստրային մարզի սահմաններում առանձնացվել է Սևանի, Արեգունի-Արևելյան Սևանի և Գեղամա-Վարդենիսի շրջանները:

Զանգեզուր հողակադաստրային մարզի մեջ ներառված են հետևյալ երեք հողակադաստրային շրջանները՝ Որոտանի, Սյունիքի և Բարգուշատի:

Նշված բոլոր հողակադաստրային շրջանների սահմաններում տարանջատվել են բազմաթիվ հողակադաստրային ագրոարտադրական խմբեր:

Եզրակացություն

Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը գնահատելու և գործնականում օգտագործելու նպատակով իրականացվել է հողերի հողակադաստրային շրջանացում և ագրոարտադրական խմբավորում:

Հենվելով հողի ծագումնաբանական տիպերի, ենթատիպերի, սեռերի, ինչպես նաև հանրապետության առանձին շրջանների բնակլիմայական պայմանների վերաբերյալ առկա նյութի վերլուծության և ընդհանրացման վրա, կատարվել է տարածքի գիտականորեն հիմնավորված բաժանում՝ հողակադաստրային մարզերի, շրջանների, իսկ հողակադաստրային շրջանների սահմաններում առանձնացվել են հողերի ագրոարտադրական խմբերը, որոնց բնութագրերը տրված են համաձայն դասակարգման նոր միջազգային WRB համակարգի:

Գրականության ցանկ

- [1] Методика государственной кадастровой оценки сельскохозяйственных угодий на уровне субъектов Российской Федерации. Гос. Комитет РФ по земельной политике, Москва, 2000.
- [2] Земельный кадастр: теория, методика, практика: учебное пособие, Под общей ред **А.А. Варламова**, ГУЗ, Москва, 2000, 532 с.
- [3] Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք. ընդունված է 2001թ մայիսի 2-ին:
- [4] **Ժ.Ա. Ամիրջանյան և ուր.**, Հողային ռեսուրսներ, հողերի օգտագործման և պահպանության կառավարում. Հողագիտության ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն, Երևան, 2000, 83 էջ:
- [5] **Р.А. Эдилян, К.Г. Мелконян**, Природно-сельскохозяйственное районирование Армянской ССР. В кн.: Почвы Армянской ССР, под ред Эдиляна и др. Айастан, Ереван, 1976. с. 350-367.

- [6] **Ա.Ս. Եզեկյան**, Հողերի որակական հատկությունների հաշվառում կադաստրային գնահատման ժամանակ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ. 30-32:
- [7] **Ա.Ս. Եզեկյան**, Հայաստանի Հանրապետության վարելահողերի կադաստրային գնահատումը և հողօգտագործման արդյունավետության տնտեսական կարգավորման խնդիրները: Ատենախոսություն ... գ.գ.դոկտորի, Երևան, 2012, 283 էջ:
- [8] **Հ.Ղ. Ղազարյան, Ս.Զ. Կրոյան** Մեթոդիկա Հայաստանի գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման. Մեկնարկ, Երևան, 2019, 161 էջ:
- [9] **С.Е. Симонян**, Принципы агропроизводственной группировки земель горных районов на примере Абовянского района: Автореф. дис. ... канд. с.-х. наук, Ереван, 1975, 55с.
- [10] **Ռ.Ա. Էդիլյան, Գ.Ա. Մկրտչյան**, Հայաստանի հողային ծածկոցի բնագյուղատնտեսական շրջանացումը. Պոլիգրաֆիայի օպերատիվ արտադրամաս, Երևան, 1990, 55 էջ:
- [11] **Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов (Ред.)**, Почвы Армянской ССР. Айастан, Ереван, 1976, 383 с.
- [12] **А.С. Езекян, П.С. Эфендян**, Кадастровая оценка земель в горных условиях землепользования. Экологический вестник, Научно-практический журнал 1(19) (Минск, 2012) 5-10.
- [13] **В.О.Таргульян, М.И. Герасимова**, Мировая коррелятивная база почвенных ресурсов: основа для международной классификации и корреляции почв, КМК, Москва, 2007, 235 с.

ПРИНЦИПЫ ЗЕМЕЛЬНО-КАДАСТРОВОГО РАЙОНИРОВАНИЯ И АГРОПРОИЗВОДСТВЕННОЙ ГРУППИРОВКИ ЗЕМЕЛЬНЫХ УГОДИЙ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО НАЗНАЧЕНИЯ РА

Самвел Залибекович Кроян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

kroyan.samvel@mail.ru

В статье рассматриваются вопросы, связанные с принципами земельно-кадастрового районирования и агропроизводственной группировки сельскохозяйственных угодий Республики Армения с использованием сравнения методов полевых и лабораторных исследований. В результате исследования выявлено, что с учетом особенностей земельно-кадастрового районирования на территории Республики Армения выделено пять земельно-кадастровых областей и ряд районов. Установлено, что земельно-кадастровое районирование будет служить основой для эффективного управления земельными ресурсами, землепользования, эффективной организации процесса кадастровой оценки земельных угодий сельскохозяйственного назначения.

Ключевые слова: *земельные угодья, кадастровое районирование земель, агропроизводственная группировка, таксономическая единица, земельный фонд*

PRINCIPLES OF LAND-CADASTRAL ZONING AND AGRICULTURAL GROUPING OF AGRICULTURAL LANDS IN RA

Samvel Kroyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
kroyan.samvel@mail.ru

The article examines issues related to the principles of land-cadastral zoning and agro-production grouping of agricultural lands in the Republic of Armenia using a comparison of field and laboratory research methods. As a result of the research, it was revealed that, taking into account the peculiarities of land-cadastral zoning, five land-cadastral regions and a number of districts have been identified in the territory of the Republic of Armenia. It has been established that land-cadastral zoning will serve as a basis for effective management of land resources, land use, and effective organization of the process of cadastral valuation of agricultural lands.

Keywords: *land holdings, cadastral zoning of lands, agricultural production grouping, taxonomic unit, land fund*

Կրոյան Սամվել Զալիբեկի, գ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Բնփնտրական գեոդեզիայի ամբիոն, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*

Кроян Самвел Залибекович, к.с.-х.н., доцент (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Инженерной геодезии, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*.

Kroyan Samvel, doctor of philosophy (Ph.D) in Agriculture, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair of Engineering Geodesy, (+ 374)93515696, *kroyan.samvel@mail.ru*.

Ներկայացվել է՝ 13.01.2025թ.

Գրախոսվել է՝ 27.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

ՀԵՏԻՈՏԼԱՅԻՆ ՎՐԱԵՐԹԵՐԸ ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՓՈՂՈՑԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎՐԱ**Վալերիկ Մամիկոնի Հարությունյան***, Աննա Հայրապետի Հայրապետյան,**Արմեն Վալերիկի Հարությունյան, Կարապետ Հակոբի Մոսիկյան***Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ*** vmh-1961@mail.ru*

Հոդվածում ուսումնասիրվել են հետիոտնային վրաերթերով ճանապարհատրանսպորտային պատահարները (ՃՏՊ): Կատարվել է հետիոտների վրաերթով ՃՏՊ-երի քանակական և որակական վերլուծություններ՝ ըստ օրվա ժամանակահատվածների, բացահայտվել են որոշակի օրինաչափություններ: Իրականացվել են Երևան քաղաքի մայրուղային փողոցների ճանապարհաձևի լուսավորության հետազոտություններ: Պարզվել է, որ առավել վթարավտանգ փողոցներում գիշերային լուսավորությունը շատ ցածր է նորմերից, այն դեպքում, երբ հետիոտնային վրաերթով ՃՏՊ-երի մեծ քանակը տեղի է ունենում օրվա մութ ժամերին: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա նախատեսվում է քննարկել հետիոտնային անցումների վրա անվտանգության բարձրացման միջոցառումներ:

Բանալի բառեր. *հետիոտն, տրանսպորտային միջոց, հետիոտնի վրաերթ, մայրուղային փողոց, վթարավտանգ, լուսավորություն, ճանապարհաձև*

Ներածություն

Ավելի վաղ կատարված հետազոտությունների շնորհիվ Համաշխարհային Բանկը եզրակացրել է, որ «Այժմ գոյություն չունի ճանապարհային երթևեկության անվտանգության արդյունավետ կառավարման համապատասխան կառույց՝ հստակ սահմանված պարտավորություններով: Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված այնպիսի ներուժի ձևավորմանը, որը կըմբռնի ճանապարհային երթևեկության անվտանգության հիմնախնդրի էությունը և կմշակի փաստերի և տվյալների վրա հիմնված ռազմավարություն և հակամիջոցներ» [1, 2]:

Պատահարներին և վնասվածքներին վերաբերող տվյալների ճշգրիտ և վստահելի բազայի առկայությունը չափազանց կարևոր գործոն է ճանապարհային երթևեկության անվտանգությունը բարելավելու համար, քանի որ այն թույլ է տալիս [3-5]՝

- ճշգրիտ սահմանել ճանապարհային երթևեկության մասնակիցների խոցելի խմբերը,
- երթևեկության անվտանգության բարձրացման միջոցները բաշխել արդյունավետ կերպով,
- սահմանել վթարների քանակի նվազեցման իրատեսական նպատակներ,
- սահմանել գործողությունների արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ:

Համաձայն վիճակագրական տվյալների, ՃՏՊ-երի ժամանակ հիմնականում մեղավոր է լինում վարորդ գործոնը՝ «վարորդ-ավտոմոբիլ-ճանապարհ-միջավայր» համակարգից: ՃՏՊ-երի առաջացման հիմնական պատճառները պետք է փնտրել ոչ միայն վարորդ գործոնի մեջ: Իրակա-

նում պատճառները բազմաթիվ և տարատեսակ են, սակայն նրանք ունեն ընդհանուր գծեր, որոնցից կարելի է նշել՝ վարորդների կողմից ճանապարհային երթևեկության օրենքներին և կանոններին ոչ լիարժեք տիրապետելը կամ կանոնների խախտումների հոգեբանությունը՝ փոխզիջման չգնալու ցանկությունը, անուշադրությունը և հոծ ինտենսիվ երթևեկության պայմաններում անթույլատրելի մանևրները և այլն, ավտոպարկի առկա վիճակը, ճանապարհային պայմանները, ճանապարհի վիճակը, ձմեռային պահպանությունը և այլն: Կարելի է նշել նաև արագության գերազանցման հակումը, որն էլ հիմնականում հանգեցնում է մահացու էլքով ճՏՊ-երի [6-8]:

Նյութեր և մեթոդներ:

Վերջին երեք տարիներին (2022-2024 թթ.) Երևան քաղաքում արձանագրվել են հետիոտնի վրաերթի էլքով 1832 ճՏՊ-եր, որից զոհվել են 129-ը, մարմնական վնասվածքներ են ստացել 1796-ը: Հետիոտնի վրաերթի էլքով ճՏՊ-երի առավել վտանգավոր հատվածներից են համարվում Մյասնիկյան, Ծովակալ Իսակովի, Արշակունյաց, Մաշտոցի, Տիգրան Մեծի պողոտաները, ինչպես նաև Ե. Քոչարի, Զորավար Անդրանիկի, Ա. Բաբաջանյան և Արտաշիսյան փողոցները [6, 7]:

ՀՀ միջպետական նշանակության ճանապարհների վրա, որոնք անցնում են բնակավայրերով, նույնպես բարձր է հետիոտնային վրաերթերով ճՏՊ-երի ցուցանիշը: Ուսումնասիրությունները կատարվել են առավել բարձր ինտենսիվություն ունեցող ավտոճանապարհներին (Մ1, Մ2, Մ3, Մ4, Մ6, Մ10): Վերջին երեք տարիների ընթացքում այս ճանապարհներին զրանցվել են 38 ճՏՊ-եր՝ հետիոտնային վրաերթի էլքով, որոնց հետևանքով զոհվել են 18 և տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացել 20 հետիոտներ [8]:


Հետիոտների վրաերթով ճՏՊ-երի որակական վերլուծության եղանակ է հանդիսանում դրանց ուսումնասիրումն ըստ օրվա ժամերի (աղ. 1):

Աղյուսակ 1

2022-2024 թթ. ամենաշատ հետիոտնային վրաերթերով մայրուղային փողոցները

Մայրուղային փողոց	Հետիոտնային վրաերթով ճՏՊ-երի քանակն ըստ օրվա ժամանակահատվածների					
	6 ⁰⁰ -8 ⁰⁰	8 ⁰¹ -14 ⁰⁰	14 ⁰¹ -18 ⁰⁰	18 ⁰¹ -20 ⁰⁰	20 ⁰¹ -22 ⁰⁰	22 ⁰¹ -24 ⁰⁰
Մյասնիկյան	2	17	12	30	41	4
Իսակովի	3	24	13	39	46	3
Արշակունյաց	3	18	14	26	42	6
Մաշտոցի	4	21	15	44	56	8
Տիգրան Մեծի	1	19	18	36	52	6
Ե. Քոչար	4	26	14	41	42	3
Զորավար Անդրանիկի	2	24	16	38	52	6
Ա. Բաբաջանյան	2	18	18	40	39	3
Արտաշիսյան	4	14	21	37	44	6
Ընդամենը	25	181	141	331	414	45

Հաշվի առնելով, որ հետիոտնային վրաերթով ՃՏՊ-երի մոտ 62 % -ը տեղի է ունենում այս մայրուղային փողոցներին, այն ներկայացնենք նաև ըստ տոկոսային հարաբերակցության և օրվա ժամերի (նկ. 1):



Մայրուղային փողոցների վրա ՃՏՊ-երի վիճակագրական վերլուծությունից պարզվում են որոշակի օրինաչափություններ, որոնք տարածվում են ցանցի բոլոր փողոցների վրա: Հետիոտնային վրաերթերը հիմնականում տեղի են ունենում օրվա մութ ժամանակահատվածում (65,5 %): Հետիոտնային վրաերթերի մեծ քանակը դիտվում է տրանսպորտային հոսքի երթևեկության ոչ պիկ ժամանակահատվածում (65,7 %): Հետիոտնային անցումների վրա օրվա մութ ժամանակահատվածում հաճախ են հետիոտնային վրաերթերը (30,2 %): Այդ վրաերթերի մեծաքանակ լինելու հիմնական պատճառ է հանդիսանում նաև մայրուղային փողոցների ծածկերի արհեստական լուսավորվածության ոչ բավարար մակարդակը [7, 9]:

Արդյունքներ և քննարկում

Քաղաքային փողոցների և ճանապարհների երթևեկելի մասերի համար ճանապարհային պատվածքի միջին պայծառությունը ($L_{միջ}$), ճանապարհային պատվածքի պայծառության երկայնական հավասարաչափությունները (U_i), ճանապարհային պատվածքի պայծառության միջին լուսավորվածությունը ($E_{միջ}$) և լուսավորվածության հավասարաչափությունը (U_h) նորմավորվում են ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերով [9-11]:


Ներկայացնենք փողոցների ճանապարհածածկի լուսավորության նորմերը (աղ. 2) [9]:

Փողոցների ճանապարհածածկի լուսավորության նորմեր

Օբյեկտի անվանումը	Երկու ուղղություններով առավելագույն ինտենսիվությունը, միավոր/ժամ	Ծածկի միջին պայծառությունը, կդ/մ ²	Ծածկի միջին հորիզոնական լուսավորվածությունը, լք. (Lux), ոչ պակաս
Համաքաղաքային նշանակության մայրուղային փողոցներ	>3000	1,6	20
	1000...3000	1,2	20
	500...1000	0,8	15
Շրջանային նշանակության մայրուղային փողոցներ	>2000	1,0	15
	1000...2000	0,8	15
	500...1000	0,6	10
	<500	0,4	10

Մայրուղային փողոցների լուսավորության հետազոտություններն իրականացվել են գիշերային ժամերին (ժ. 22⁰⁰-1⁰⁰)՝ մինչև փողոցային լույսերի անջատվելը: Ինչպես երևում է չափումների տվյալներից, լուսավորվածության նորմերը պահպանվում են Թբիլիսյան խճուղու վրա, Արշակունյաց պողոտայի վրա՝ մասամբ (քանի որ փողոցի եզրային գոտիների վրա մոտ 6 լք է, Դավիթ Բեկի փողոցի որոշ հատվածների վրա (Նոր Նորքի) ապահովվում են նորմերը, իսկ Էրեբունու վարչական հատվածում՝ ոչ (3...8, 11 լք):

Չափումները կատարվել են լյուքսչափիչ և լազերային հեռաչափ գործիքներով (նկ. 2):




Նկ. 2. ա - Լյուքսաչափ, բ - Լազերային հեռաչափ

Բոլոր փողոցների վրա լուսավորվածությունն անհամաչափ է, ինչպես երևում է նաև աղ. 3-ի տվյալներից:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, առավել վթարավտանգ փողոցներում գիշերային լուսավորությունը շատ ցածր է նորմերից (աղ. 3, նկ. 3)

Մայրուղային փողոցների լուսավորվածությունը

Մայրուղային փողոց	Լուսավորվածություն		
	ըստ նորմերի	խաչմերուկում	ուղեմասում
Դավիթ Բեկի փողոց	20	3...8, 11, 20	26, 20, 30...36
Գայի պողոտա	20	20,13...14, 17...18, 28...40	15...20,13...14, 7...10, 8...9
Հերացու փողոց	20	6...8	2...3, 4, 6...8
Կորյունի փողոց	20	14...23, 7...11, 13...14, 36	3...6, 7...8, 2...11, 2...13
Մաշտոցի պողոտա	20	10...12,16...35, 8...12, 26, 40	9...10, 14...16, 6...10, 7...11
Կոմիտասի պողոտա	20	4-5, 16-17, 10-12, 6-8	7...1, 6...8, 10...12, 16...17
Ազատության պողոտա	20	3...7, 26, 2...5, 14, 15	2...5, 5...8, 9...10
Թբիլիսյան խճուղի	20	32...40	36...46
Արշակունյաց պողոտա	20	25, 20	18...21, 6, 20...25
Տիգրան Մեծի պողոտա	20	2...7, 7...11, 18...20, 7...18	2...7, 4...7, 18...20, 7...20
Մյասնիկյան պողոտա	20	6...8	1...3, 6...8





Նկ. 3. Մայրուղային փողոցների երթևեկելի ծածկի լուսավորության չափման օրինակներ

Վերջին 20 տարիների ՃՏՊ-երի վերլուծությունը ցույց է տվել, որ Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի վրա ՃՏՊ-երի մեծ մասը՝ մոտ 30,4 % -ը, տեղի է ունենում երեկոյան ժամը 8⁰⁰-ից մինչև գիշերվա 1⁰⁰-ն ընկած ժամանակահատվածում: Մա այն ժամանակահատվածն է, երբ առկա է տրանսպորտային հոսքի ինտենսիվություն (500-1000 *ավտ./ժ*), միացված է արհեստական լուսավորությունը, որն առավելապես չի համապատասխանում նորմերին (20 *լք* -ի փոխարեն անկանոն լուսավորություն՝ 2...3 *լք* -ից մինչև 46 *լք*), առկա է վարորդների համար հանդիպակաց և համընթաց ուղղություններով կուրացման երևույթը, ինչպես նաև ավտոմոբիլների լուսարձակների լուսավորությամբ պայմանավորված ճանապարհաձածակի փայլատակումը, որը պատճառ է սաֆալտբետոնյա ծածկի ճաքերը բիտումով ոչ թե լցնելու, այլ լողզելու հետևանքով, որտեղ լուսավորվածությունը բավականին ցածր է նորմերից: Ավտոմոբիլները հիմնականում երթևեկում են բարձր արագությամբ, հզոր լուսարձակներով (հաճախ՝ հեռահար միացված) կտրուկ մանևրներ կատարելով (հիմնականում երիտասարդ վարորդներ), որոնք և՛ հետիոտնի վրաերթեր են առաջացնում, և՛ մահացու ելքերով ՃՏՊ-եր: Այդ ժամերին երթևեկելի մասի և նույնիսկ հետիոտնային անցումների վրա գտնվող հետիոտները բոլորովին անտեսանելի են:

Մայրուղային փողոցներում ՃՏՊ-երի հիմնական տեսակներն են [11-13].

- բախում -54,4 %,
- հետիոտնի վրաերթ -25,5 %,
- խոչընդոտի վրաերթ -10 %,
- այլ -10,1 %:

ՃՏՊ-երի պատճառ հանդիսացող հիմնական խախտումներն են.

- երթևեկության թույլատրելի արագության գերազանցում – 31 %,
- հետիոտնի կողմից ոչ թույլատրված հատվածով անցում – 22 %,
- շարքերի վերադասավորում (կտրուկ մանևրներ) -12 %,
- խաչմերուկի (հիմնականում՝ չկարգավորվող) անցման կանոնների խախտում -11 %,

- չի պահպանել ճանապարհային նշանների պահանջները -9 %,
- տրանսպորտային միջոցների միջև միջտարածության չպահպանում-6 %:

ՃՏՊ-երի քանակով երկրորդ տեղում են հետիոտնի վրաերթ տեսակի վթարները: Այդ վթարների մեծ քանակը հիմնականում պայմանավորված է՝

- հետիոտների անզգուշությամբ,
- չթույլատրված հատվածներով փողոցի անցումը,
- օրենքների չիմացությամբ ,
- վարորդների անզգուշությամբ և զգոնության բացակայությամբ,
- օրվա մույթ ժամանակ փողոցի նորմերին ոչ համապատասխան լուսավորվածությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ առկա են մի շարք խնդիրներ, կապված՝

- երթևեկության կազմակերպման (հետիոտնային անցումներ, նշաններ, գծանշումներ, հետիոտնային պաշտպանիչներ),
- վարորդների պատրաստման և վերապատրաստման,
- փողոցային ցանցի ծածկի լուսավորվածության մակարդակի ապահովումն ըստ նորմերի,
- նախադպրոցական և դպրոցական կրթարաններում երթևեկության կանոնների, էթիկայի դասավանդում, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը» առարկայի ուսումնասիրությունը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում» (N 305-Ն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման):

Գրականության ցանկ

- [1] Доклад о состоянии безопасности дорожного движения в Европейском регионе ВОЗ 2019. Европейское региональное бюро ВОЗ, Копенгаген, 2022, 133 с.
- [2] Повышение безопасности дорожного движения во всем мире. Резолюция, принятая Генеральной Ассамблей ООН, 2023, 13 с.
- [3] Հայաստանի և Երևանի ճանապարհներին երթևեկության անվտանգության ազգային ռազմավարության և հնգամյա գործողությունների պլան, ՀՀ, 2018, 52 էջ:
- [4] World Health Organization, Global status report on road safety, London, 2018, 424 p.
- [5] **Margie Peden** (Ed.), World report on road traffic injury prevention, World Health Organization, 2014, 244 p.
- [6] ՃՏՊ վիճակագրություն, Police.am.
- [7] **Վ.Մ. Հարությունյան**, Երևան քաղաքի մայրուղային փողոցների «սև կետերի» հայտնաբերում, վերլուծություն և միջոցառումների առաջարկներ. Երևան, 2023, 112 էջ:
- [8] **Վ.Մ. Հարությունյան**, ՀՀ միջպետական նշանակության ավտոճանապարհների «սև կետերի» հայտնաբերում, վերլուծություն և միջոցառումների առաջարկներ: Երևան 2023 թ., 231 էջ:

- [9] ՀՀՇՆ 22-03-2017. Արհեստական և բնական լուսավորում. Երևան, 2017, 88 էջ:
- [10] «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ Օրենք. ՀՀ Շառավարության որոշում, 11 ապրիլի 2019թ., № 439-2:
- [11] **В.И. Коноплянко**, Организация и безопасность дорожного движения, Высшая школа, 2017, Москва, 175 с.
- [12] **Ю.А. Врубель**, О дорожном движении. Что полезно знать водителям и пешеходам, 2021, 250 с.
- [13] **S. Yamson, C. Uzundu, D. Hibberd**, Can infrastructure improvements mitigate unsafe traffic safety culture. A driving simulator study exploring cross cultural differences, Transportation Research Part F: Traffic Psychology and Behaviour 73 (2020) 205-221.

ПЕШЕХОДНЫЕ НАЕЗДЫ НА УЛИЧНО-ДОРОЖНОЙ СЕТИ РА

Валерик Мамиконович Арутюнян*, Анна Айрапетовна Айрапетян,
Армен Валерикович Арутюнян, Карапет Акопович Мосикян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**vmh-1961@mail.ru*

В статье исследуются дорожно-транспортные происшествия (ДТП), связанные с наездами на пешеходов. Был проведен количественный и качественный анализ дорожно-транспортных происшествий с участием пешеходов в зависимости от времени суток, выявлены определенные закономерности. Также проведены исследования по освещению дорожного покрытия магистральных улиц города Еревана. Установлено, что на наиболее аварийно опасных улицах уровень ночного освещения значительно ниже норм, в то время как большая часть ДТП с участием пешеходов происходит в темное время суток. На основе проведенных исследований планируется обсудить меры по повышению безопасности на пешеходных переходах.

Ключевые слова: *пешеход, транспортное средство, наезд на пешехода, магистральная улица, аварийная опасность, освещенность, дорожное покрытие*

PEDESTRIAN COLLISIONS ON THE STREET AND ROAD NETWORK OF THE RA

Valerik Harutyunyan*, Anna Hayrapetyan, Armen Harutyunyan, Karapet Mosikyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**vmh-1961@mail.ru*

The Article studies the road traffic accidents (RTAs) involving pedestrian collisions. Quantitative and qualitative analysis of pedestrian RTAs have been conducted according to the time of the day and certain patterns have been identified. Research has also been conducted on the road surface lighting of the arterial street in Yerevan. It has been found out that the nighttime lighting in accident-prone streets is below the norms, while the majority of pedestrian accidents occur during the dark hours of the day. Based on the research conducted, it is envisaged to discuss measures to enhance safety at pedestrian crossings in the next article.

Keywords: *pedestrian, means of transportation, pedestrian accident, arterial street, accident-prone, lighting, road surface*

Հարությունյան Վալերիկ Մամիկոնի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթուղիների կազմակերպման ամբիոն, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Հայրապետյան Աննա Հայրապետի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթուղիների կազմակերպման ամբիոն, դասախոս, (+374)91806019, annahayrapetyan@list.ru, **Հարությունյան Արմեն Վալերիկի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթուղիների կազմակերպման ամբիոն, (+374)95683341, Arm.harutyunyan7@mail.ru, **Մոսիկյան Կարապետ Հակոբի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթուղիների կազմակերպման ամբիոն, (+374)94854540, karomosikyan@mail.ru

Арутюнян Валерик Мамиконович, к.т.н., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Айрапетян Анна Айрапетовна** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, лектор, (+374)91806019, annahayrapetyan@list.ru, **Арутюнян Армен Валерикович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, (+374)10567572, (+374)43116611, Arm.harutyunyan7@mail.ru, **Мосикян Карапет Акопович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, (+374)94854540, karomosikyan@mail.ru

Harutyunyan Valerik, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Hayrapetyan Anna** (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)91806019, annahayrapetyan@list.ru, **Harutyunyan Armen, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)10567572, (+374)43116611, Arm.harutyunyan7@mail.ru, **Mosikyan Karapet, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) – NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)94854540, karomosikyan@mail.ru

Ներկայացվել է՝ 27.01.2025թ.

Գրախոսվել է՝ 03.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՅԻՆ ՃԿՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վալերիկ Մամիկոնի Հարությունյան*, Խաչատուր Գագիկի Խաչատրյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ***vmb-1961@mail.ru*

Քննարկվում են քաղաքների մայրուղային փողոցներում տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունների ավելացմամբ պայմանավորված երթևեկության հիմնախնդիրները: Ուսումնասիրվել է խաչմերուկի մոտեցումներում տեղային ճկուն կառավարման (ՏՃԿ) պայմաններում ավտոմոբիլների խմբերի ձևափոխության գործընթացը, դրանց ձևավորման և կազմալուծման հատկությունները: Տրանսպորտային հոսքերի հատկությունների դիտարկված վերլուծությունը հնարավորություն է տալիս հայտնաբերել կարևոր գործոնները, որոնք ներազդում են ՏՃԿ աշխատանքի արդյունավետության վրա, ինչպես նաև որոշել յուրաքանչյուր ավտոմոբիլի կանգառման և ուղացման փաստը:

***Բանալի բառեր.** տրանսպորտային հոսք, խաչմերուկ, տեղային ճկուն կառավարում, ավտոմոբիլային խմբեր, տրանսպորտային ուղացում, փուլի տեղաշարժ, ավտոմոբիլների խմբի ադապտիվություն*

Ներածություն

Քաղաքների մայրուղային փողոցներում տրանսպորտային հոսքերի ինտենսիվությունների ավելացմամբ պայմանավորված երթևեկության հիմնախնդիրներն առավել ցայտուն են արտահայտվում ճանապարհափողոցային ցանցի (ՃՓՑ) հանգուցային կետերում: Այստեղ աճում են տրանսպորտային ուղացումները, կազմավորվում են հերթեր, առաջանում են խճողումային և խցանման իրավիճակներ, որոնք հանգեցնում են հաղորդակցման արագության նվազեցման, վառելիքի չարդարացված ծախսերի, տրանսպորտային միջոցների հանգույցների և ագրեգատների մաշվածության մեծացման [1, 2]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Երևան քաղաքի ՃՓՑ-ում ճանապարհատրանսպորտային պատահարների 27,5 % -ը տեղի է ունենում խաչմերուկներում և տրանսպորտային ուղացումների հիմնական բաժինն ընկնում է խաչմերուկների վրա:

Արագ և անվտանգ երթևեկության ապահովումը պահանջում է ճարտարապետահատակագծային և կազմակերպչական բնույթի համալիր միջոցառումների կիրառում: Այդպիսի միջոցառումներին են դասվում նոր փողոցների կառուցումը, գոյություն ունեցողների վերակառուցումը, տարբեր մակարդակների տրանսպորտային հանգույցների, վերգետնյա և ստորգետնյա հետիոտնային անցումների և քաղաքի շրջանցման ճանապարհների կառուցումը, կենտրոնական մայրուղային փողոցներից տարանցիկ տրանսպորտային հոսքերի դուրս բերումը և այլն:

Կազմակերպչական միջոցառումները նպաստում են ՃՓՑ-ում երթևեկության կանոնա-
կարգմանը: Այդպիսի միջոցառումներից են միակողմանի երթևեկության ներդրումը, խաչմերուկ-
ներում օդակաձև երթևեկության կազմակերպումը, տեղային ճկուն կառավարման ներդրումը և
այլն [3, 4]:

Նյութեր և մեթոդներ

Խաչմերուկի գոտում ավտոմոբիլի կանգառը և ուշացումն առաջանում են պայմանավորված
լուսացույցի կանաչ ազդանշանի անհամաժամանակյա միացման պահերով:

Խաչմերուկի կանգ-գծի մոտեցումներում հնարավոր են երթևեկության հետևյալ ռեժիմները՝

- ավտոմոբիլն անցնում է կանգ-գիծը կանաչ ազդանշանով, գործնականում առանց նվա-
զեցնելու արագությունը,
- ավտոմոբիլը կանգ-գծի մոտեցումներում նվազեցնում է արագությունը, քանի որ նախա-
պես կուտակված հերթը չի հասցրել բեռնաթափվել,
- ավտոմոբիլը կանգնում է կարմիր ազդանշանի առկայությամբ, սպասում է հերթում և
անցնում խաչմերուկը հերթի բեռնաթափման պայմաններում:

Խաչմերուկի մոտեցումներում ավտոմոբիլների խմբերի ձևափոխության գործընթացն ունի
երեք հստակ արտահայտված փուլեր.

- խմբերի ձևավորումը՝ խաչմերուկի գոտում արգելող ազդանշանի առկայությամբ,
- խմբերի ձևավորումը՝ կանգ-գծից հերթի մեկնման դեպքում,
- խմբերի կազմալուծումն ուղեմասով երթևեկության ընթացքում:

Ավտոմոբիլների խմբերի ձևավորման գործընթացը խաչմերուկի արգելող ազդանշանի
առկայությամբ մեծապես որոշվում է առաջընթացիկների վարքագծով [5, 6]:

Խմբերի ձևավորման և կազմալուծման հատկությունը կարևոր նշանակություն ունի տրանս-
պորտային հոսքերի կառավարման համակարգված մոտեցման համար: Երթևեկության ընթաց-
քում խմբի կազմալուծման աստիճանն անհրաժեշտ է հարաբերակցել հարակից խաչմերուկների
լուսացույցերի թույլատրող ազդանշանի միացման պահերի հետ:

Առաջընթացիկի արգելակումն ունի հավասարաչափ դանդաղեցման բնույթ, ուստի խմբի
ձևավորման գործընթացում ինտենսիվության փոփոխության ֆունկցիան ըստ ժամանակի մեծա-
մասամբ ունի գծային տեսք: Հաշվի առնելով տեղային ճկուն կառավարման ցիկլի տևողության
որոշման արտահայտությունը՝

$$T_{ցիկլ} = \sum_{i=1}^n (t_{հիւ,i} + t_{միջ,i}), \tag{1}$$

որտեղ $t_{հիւ,i}$ -ն և $t_{միջ,i}$ -ն i -րդ փուլի հիմնական և միջակա տակտի տևողություններն են, n -ը՝
փուլերի քանակը ցիկլում:

Ավտոմոբիլների խմբերի ամբողջական ձևափոխությունը կարելի է ներկայացնել հետևյալ
արտահայտությամբ՝

$$\lambda(t) = \begin{cases} \lambda_0 e^{-kt}, & երբ 0 \leq t < t_{նլ} - t_{արգ}, \\ \frac{\lambda_0}{t_{արգ}} [1 - e^{-k(t_{նլ} - t_{արգ})}] (t - t_{արգ}) + \lambda_0, & երբ t_{նլ} - t_{արգ} \leq t \leq t_{նլ}, \end{cases} \tag{2}$$

որտեղ λ_0 -ն խմբի ձևավորման պահին ակնթարթային ինտենսիվությունն է, k -ն՝ կառավարման պարամետրը ($k = 0,008$), $t_{ուղ}$ - ն՝ ուղեմասն անցնելու ժամանակը:

(2) կախվածությունը ցույց է տալիս, որ խմբերի ձևափոխության բնույթը կախված է ուղեմասի երկարությունից (անցման ժամանակից) և լուսացույցի արգելող ազդանշանը թույլատրողի փոխարկման պահից, այսինքն՝ փուլի տեղաշարժից, որը կայանում է ավտոմոբիլների խմբի ադապտիվությունից: Այսպիսով, տրված երկարությամբ ուղեմասի դեպքում փուլի տեղաշարժի մեծության ընտրման օպտիմալացումը երթևեկության կառավարման գլխավոր խնդիրն է [7, 8]:

Արդյունքներ և քննարկում

Տեղային մակարդակում ուշացումների որոշման մեթոդի դիտարկման դեպքում հաշվի է առնվում լուսացույցերի ազդանշանների փոփոխման ժամանակը և տրանսպորտային դետեկտորի կտրվածքով ավտոմոբիլը հատելու ժամանակի վերաբերյալ համակարգ հաղորդվող տեղեկատվությունը:

Դետեկտորի կողմից հսկվող կտրվածքը գտնվում է մուտքի տարածքում այնպիսի հեռավորության վրա, որն ավելի մեծ է, քան խաչմերուկի մոտեցման տարածքը, իսկ խաչմերուկի տարածքի ելքի վրա, այսինքն դետեկտորի կանգ գծի վրա ավտոմոբիլ չկա [9]:

Այդ դեպքում, j -րդ ավտոմոբիլի d_j ուշացումը որոշվում է որպես $t_{ելքj}$ -ի՝ կանգ-գծի հատման իրական (երբ առկա է երթևեկության խոչընդոտ) և $t_{ելքj}^0$ -ի՝ իդեալական ժամանակների տարբերություն (երբ ավտոմոբիլը երթևեկում է ազատ ռեժիմով) [10, 11].

$$d_j = t_{ելքj} - t_{ելքj}^0 : \tag{3}$$


Ներկայացված է հսկվող հատվածից մինչև կանգ-գիծն ավտոմոբիլների անցման պարզեցված դիագրամը (նկ.): Ընդունվում է, որ ավտոմոբիլի արագության փոփոխությունը տեղի է ունենում ակնթարթորեն:

Նկարից երևում է, որ՝

$$t_{ելքj} = t_{մտ.j} + \frac{L}{V_j} = t_{մտ.j} + \tau_{անցj} \tag{4}$$

որտեղ L -ը հսկվող հատվածից մինչև կանգ-գիծը եղած հեռավորությունն է, V_j -ն՝ j -րդ ավտոմոբիլի արագությունը հսկվող հատվածի կտրվածքով անցնելիս, $\tau_{անցj}$ -ն՝ հսկվող հատվածի կտրվածքից մինչև կանգ-գիծն անցնելու ժամանակը, երբ բացակայում են խոչընդոտները: Վերջնական արդյունքում ուշացումը որոշվում է հետևյալ արտահայտությամբ [12]՝

$$d_j = t_{ելքj} - t_{մտ.j} - \tau_{անցj} : \tag{5}$$



*Նկ. Խաչմերուկի գոտում ավտոմոբիլների երթևեկության ժամանակային դիագրամը.
ա - ճանապարհի սխեման, բ - ժամանակային դիագրամը*

Եզրակացություն

Երթևեկության խմբային բնութագրով տրանսպորտային հոսքի ձևավորումը հիմնականում հանդես է գալիս երթևեկության միջին ինտենսիվությունների դեպքում: Տրանսպորտային հոսքերի հատկությունների դիտարկված վերլուծությունը հնարավորություն է տալիս հայտնաբերել կարևոր գործոնները և կատարել հետևյալ եզրակացությունները՝

- տեղային ճկուն կառավարման աշխատանքի արդյունավետության վրա ներազդող գործոններն առավել արտահայտիչ են տրանսպորտային հոսքի ազատ վիճակի դեպքում,
- քանի որ տրանսպորտային հոսքի երթևեկության ինտենսիվությունը կայուն չէ, ապա հոսքի վիճակը բնութագրող հիմնական հատկություններից ներազդում են դինամիկությունը (ՏՀ-ի հատկություն է, որը ներկայացնում է երթևեկության ինտենսիվության փոփոխությունները) և ստոխաստիկությունը (ՏՀ-ի հատկություն է, որն արտահայտվում է հոսքի հավանական բնութագրերով),
- փոխկապակցվածությունը ներազդում է մասամբ, երբ երթևեկությունն իրականացվում է կարճ ուղեմասերում (մինչև 100 մ),
- հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս որոշել յուրաքանչյուր ավտոմոբիլի կանգառման և ուշացման փաստը, կիրառելով հսկվող հատվածով ավտոմոբիլի անցման և լուսացուցային ազդանշանի փոխարկման վերաբերյալ տեղեկատվությունը:

Գրականության ցանկ

- [1] **А.Н. Новиков**, Организация дорожного движения, учебное пособие, Белгород, БГТУ, 2020, 195 с.
- [2] **Д.В. Капский, Д.В. Навой, П.А. Пегин**, Разработка модели транспортных потоков на улично-дорожной сети города, Наука и техника 18(1) (2019) 47-54.
- [3] **О.С. Гасилова, Б.А. Сидоров**, Организация дорожного движения, учебно-методическое пособие, Екатеринбург, УГЛТУ, 2022, 68 с.
- [4] **В.Н. Рутковский, Д.В. Капский**, Анализ, разработка и реализация адаптивных алгоритмов (гибкого) светофорного регулирования, Системный анализ и прикладная информатика 3 (2023) 4-16.
- [5] **Д.В. Капский, Ю.А. Врубель, Д.В. Навой**, Автоматизированные системы управления дорожным движением: учеб. пос., Новое знание, Минск; ИНФРА-М, Москва, 2015, 384 с.
- [6] **В.Н. Галушко, С.А. Аземша, Д.В. Капский, Е.Н. Кот, И.Н. Кравченя**, Оптимизация в дорожном движении, БелГУТ, Гомель, 2021, 185 с.
- [7] **В.Л. Жданов**, Технические средства организации дорожного движения: учеб. пос., КузГТУ, Кемерово, 2017, 267 с.
- [8] **И.А. Евстигнеев**, Основы создания интеллектуальных транспортных систем в городских агломерациях России, Изд-во «Перо», 2021, 294 с.
- [9] **М.Х. Гатиятуллин, Р.Р. Загидуллин**, Автоматизированные системы управления дорожным движением: учеб. пос., Изд-во Казанск. гос. архитектур.-строит. ун-та, Казань, 2017, 79 с.
- [10] **Վ.Մ. Հարությունյան, Խ.Գ. Խաչատրյան**, Տեղային ճկուն կառավարման համակարգի արդյունավետության գնահատման գործնական վերլուծություն, ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 2 (89) (2024) 37-44:
- [11] **С.А. Андронов**, Сравнение эффективности адаптивных алгоритмов светофорного регулирования в среде AnyLogic, Программные продукты и системы 32(1) (2019) 150–158.
- [12] **В.В. Петров**, Теория управления движением транспортных потоков в городах: учеб. пос., СиБАДИ, 2020, 101 с.

**ТЕОРЕТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ МЕСТНОГО ГИБКОГО РЕГУЛИРОВАНИЯ
ДОРОЖНОГО ДВИЖЕНИЯ НА ПЕРЕКРЕСТКАХ**

Валерик Мамиконович Арутюнян*, Хачатур Гагикович Хачатрян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*vmh -1961@mail.ru

Рассматриваются проблемы дорожного движения, вызванные увеличением интенсивности транспортных потоков на главных улицах городов. Изучены процесс преобразования групп автомобилей в условиях местного гибкого регулирования (МГР) на подходе к перекрестку, свойства их формирования и распада. Проведенный анализ свойств транспортных потоков позволяет выявить важные факторы, влияющие на эффективность работы МГР, а также определить факт остановки и задержки каждого автомобиля.

Ключевые слова: *транспортный поток, перекресток, местное гибкое регулирование, автомобильные группы, задержка транспорта, фазовый сдвиг, адаптивность автомобильной группы*

A THEORETICAL STUDY OF LOCAL FLEXIBLE TRAFFIC REGULATION AT INTERSECTIONS

Valerik Harutyunyan *, Khachatur Khachatryan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**vmh-1961@mail.ru*

The article deals with traffic problems caused by an increase in the intensity of traffic flows on the main streets of cities. The process of transformation of groups of cars under conditions of local flexible regulation (MGR) in the approach to the intersection, the properties of their formation and decay are studied. The analysis of the properties of traffic flows makes it possible to identify important factors affecting the efficiency of the MGR, as well as to determine the fact of stopping and delaying each car.

Keywords: *traffic flow, intersection, local flexible regulation, automobile groups, transport delay, phase shift, adaptability of the automobile group*

Հարությունյան Վալերիկ Մամիկոնի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաների և երթևեկության կազմակերպման ամբիոն, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Խաչատրյան Խաչատուր Գաղիկի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Շինարարական մեքենաներ և երթևեկության կազմակերպման ամբիոն, հայտորդ, (+374)93693269, xachatryanx.1998@gmail.com

Арутюнян Валерик Мамиконович, к.т.н., доцент (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Хачатрян Хачатур Гагикович** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Строительных машин и организации движения, соискатель, (+374)93693269, xachatryanx.1998@gmail.com

Harutyunyan Valerik, doctor of philosophy (Ph.D) in engineering, Associate Professor (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, (+374)10567572, (+374)93100825, vmh-1961@mail.ru, **Khachatryan Khachatur** (RA, Yerevan) - NUACA, Chair of Construction Machinery and Organization of Traffic, applicant, (+374)93693269, xachatryanx.1998@gmail.com

Ներկայացվել է՝ 28.01.2025թ.

Գրախոսվել է՝ 03.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

**ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԴԻՉԱՅՆԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Կլարա Սամվելի Մարգարյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
km2010ha@gmail.com*

Հողվածում դիտարկվում է գրաֆիկական դիզայնի նշանակությունն ու դերը նորաձևության ոլորտում: Հողվածի նպատակն է ցույց տալ, որ գրաֆիկական դիզայնը բացի ապրանքը գովազդելու միջոց լինելուց նաև բուն հագուստի դիզայնի մաս է: Ուսումնասիրված է գրաֆիկական դիզայնի ազդեցությունը նորաձևության վրա՝ 90-ականներից մինչև մեր օրեր և թե ինչպես է նորաձևությունը ոգեշնչում գրաֆիկական դիզայներներին և հակառակը: Անդրադարձ է կատարվում, թե գրաֆիկական դիզայնի ինչ սկզբունքներ և տեխնիկա են օգտագործվում ժամանակակից նորաձևության ոլորտի մեջ և թե ինչ ձևաչափերով են համագործակցում այս երկու ոլորտները: Այն կարող է ծառայել որպես ուսումնասիրության նյութ գրաֆիկական դիզայնի և նորաձևության ոլորտն ուսումնասիրող ուսանողների և մասնագետների համար, ինչպես նաև խթանել տվյալ ոլորտների կապը և զարգացումը Հայաստանում:

***Բանալի բառեր.** գրաֆիկական դիզայն, նորաձևություն, միտում, գրաֆիկական նախշեր, ժամանակակից մոտիվներ*

Ներածություն

Հետ նայելով, թե ժամանակի ընթացքում ինչպես են այս երկու ոլորտները միասին աշխատել, կարելի է տեսնել, թե որքան սերտորեն են կապված դրանք: Գրաֆիկական դիզայնը կարևոր դեր է խաղում նորաձևության աշխարհում՝ որպես ապրանքանիշի ինքնությունն ու ոճը արտահայտելու և ընդգծելու միջոց: Երկու ոլորտների միջև փոխազդեցությունն ու համագործակցությունը ստեղծում է հետաքրքիր և նորարար լուծումներ, որոնք ընդհանուր առմամբ նպաստում են նորաձևության ոլորտի զարգացմանը: Նորաձևության միտումներն ու ոճն էլ իրենց հերթին կարող են ազդել գրաֆիկական դիզայնում կիրառվող լուծումների վրա:

Երբ դիտարկվում է, թե ինչպես են միավորվում գրաֆիկական դիզայնը և նորաձևության դիզայնը, պարզ է դառնում, որ դրանք ունեն ընդհանուր գաղափարներ: Երկու ոլորտներն էլ կենտրոնանում են ինչ-որ գրավիչ և իմաստալից բան ստեղծելու վրա՝ օգտագործելով այնպիսի գործիքներ, ինչպիսիք են գունատեսությունը, հորինվածքը, հավասարակշռությունը և հակադրությունը: Օրինակ, դիզայները կարող է հագուստի մեջ օգտագործել համարձակ գունային լուծումներ, ճիշտ այնպես, ինչպես այն կարող է օգտագործվել պաստառում, ուշադրություն գրավելու և որոշակի տրամադրություն կամ հաղորդագրություն փոխանցելու համար: Նորաձևության դիզայները կարող է օգտագործել թվային տպագրություններ՝ ոգեշնչված գրաֆիկական դիզայ-

նից՝ հասարակ զգեստը վերածելով արվեստի գործի: Այս մտտեցումը ցույց է տալիս, թե ինչպես գրաֆիկական դիզայնի տարրերը կարող են ուղղակիորեն ազդել նորաձևության վրա, ինչը հանգեցնում է նորարարական և արտահայտիչ հագուստի ստեղծմանը [1]:

Արվեստի երկու ուղղություններն էլ ներշնչանք են գտնում ժամանակակից միտումների, մշակույթի և գեղագիտության մեջ: Գրաֆիկական դիզայներների և նորաձևության ապրանքանիշերի միջև համագործակցությունն ընդգծում է ուժեղ տեսողական ինքնության ստեղծման կարևորությունը, ինչը գրավում և տպավորում է մարդկանց: Այս փոխազդեցությունը հանգեցնում է եզակի համագործակցությունների ստեղծմանը, որոնք օգնում են նորաձևության ապրանքանիշերին առանձնանալ մրցակիցներից և հիշվել իրենց լսարանի կողմից: «Գրաֆիկական դիզայնը և նորաձևությունը երկու ոլորտներ են, որոնք կատարելապես լրացնում են միմյանց՝ ստեղծելով եզակի և ոգեշնչող դիզայն» (դիզայներ Մարկ Ջեյքոբս [2]):

Տեխնոլոգիական առաջընթացը նույնպես ազդում է նորաձևության և գրաֆիկական դիզայնի վրա: Թվային տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ դիզայներներն ավելի շատ հնարավորություններ ունեն ստեղծագործելու և փորձերի համար, կարող են ստեղծել բարդ և դինամիկ հորինվածքներ, օգտագործել անիմացիա (շարժման պատրանք ստեղծելու և միմյանցից աննշան տարբերվող անշարժ պատկերների արագ փոփոխման գործընթաց) և այլն: Ընդհանուր առմամբ նորաձևությունը և գրաֆիկական դիզայնը շարունակում են զարգանալ և փոխվել, քանի որ մարդկանց ակնկալիքները մշտապես փոխոխվում են: Կարևոր է հաշվի առնել նորաձևության վերջին միտումները և կիրառել նորարարական տեխնիկա և տեխնոլոգիաներ՝ ստեղծելու եզակի և հիշարժան աշխատանքներ:

«Նորաձևությունը մշտապես շարժման մեջ է, այն արտացոլում է հասարակության զարգացումը և նոր միտումները: Գրաֆիկական դիզայնը նորաձևության մեջ թույլ է տալիս ստեղծել գրավիչ և հիշարժան պատկերներ» (դիզայներ Ալեքսանդեր Վանգ [2]):

Նյութեր և մեթոդներ

Գրաֆիկական և նորաձևության դիզայնի համագործակցությունը մեծ նշանակություն ունի ստեղծագործական աշխարհում: Դա նման է տեսողական արվեստը խառնելու այն արվեստին, որը կրում է անձը: Այս խառնուրդը փոխեց մարդկանց մտածելակերպը դիզայնի մասին և հանգեցրեց հիանալի հավաքածուների ստեղծմանը:

Գրաֆիկական դիզայնի և նորաձևության միջև համագործակցությունը կարող է լինել տարբեր ձևաչափերով: Օրինակներից մեկը նորաձևության ապրանքանիշերի և գովազդային արձավների նյութերի ստեղծումն է: Գրաֆիկական դիզայնը առանցքային դեր է խաղում արդյունավետ հաղորդակցության և ապրանքների, ծառայությունների նկատմամբ ուշադրություն գրավելու գործում: Հայեցակարգային և գրավիչ դիզայնի միջոցով ապրանքանիշերը կարող են առանձնանալ մնացածից և գրավել ավելի շատ սպառողներ:

Համագործակցության մեկ այլ ձև է նորաձևության ապրանքանիշերի համար փաթեթավորման և պիտակների ստեղծումը: Հարմարավետ և գրավիչ փաթեթավորումը կարևոր դերակատարություն ունի սպառողների շրջանում:

Հետաքրքիր համագործակցության ձև են ներկայացնում նորաձևությունն ու գրաֆիկական դիզայնը համատեղող նախագծերը: Դրանք կարող են լինել ցուցահանդեսներ, ֆոտոսեսիաներ կամ ամսագրերի նախագծեր, որտեղ նորաձևության և գրաֆիկական դիզայներները միասին ստեղծում են նոր գաղափարներ: Նման համագործակցությունը նպաստում է նորաձևության և դիզայնի ոլորտում փոխադարձ առաջխաղացմանն ու դիրքերի ամրապնդմանը:

Գրաֆիկական դիզայնի և նորաձևության ոլորտի կարևոր համագործակցություններից մեկը, որի մասին և խոսվում է հոդվածում, հագուստի հավաքածուների ստեղծումն է՝ ոգեշնչված հայտնի նկարիչների աշխատանքներով կամ գրաֆիկական դիզայնի ոճերով: Այս համագործակցությունները թույլ են տալիս նորաձևության ապրանքանիշերին ստեղծել յուրօրինակ հագուստ և ներգրավել նոր սպառողների, իսկ դիզայներներին ընդլայնել իրենց ստեղծագործական ընդունակությունները:

Արդյունքներ և քննարկում


Ընդգծելու համար գրաֆիկական դիզայնի դերն ու ազդեցությունը նորաձևության ոլորտում, որպես հագուստի մաս՝ ստորև կքննարկվեն հայտնի նկարիչների, դիզայներների և նորաձևության տների համագործակցությամբ ստեղծված մի քանի հավաքածուներ:

Նկարիչ, դիզայներ, լուսանկարիչ և հրատարակիչ Էնդի Ուորհոլի ներդրումը գրաֆիկական դիզայնի և նորաձևության աշխարհում զգալի է: Նրա նորարարական մոտեցումները, ներառյալ մետաքսատպագրությունը (*шелкография*), տեքստի և պատկերների կրկնությունն ու ինտեգրումն անջնջելի հետք թողեցին երկու ոլորտներում [3]:

Versace նորաձևության տունը 1991 թ. գարուն-ամառ հավաքածուի (նկ. 1) համար ստեղծեց հագուստ ոգեշնչված փոփ-արտից՝ զգեստի տարրերի մեջ ներառելով Էնդի Ուորհոլի աշխատանքները [4]: Նույն այդ մոտիվներով նորաձևության տունը ստեղծեց իր 2017 թ. գարուն-ամառ հավաքածուն (նկ. 2)՝ ընդգծելով Ուորհոլի աշխատանքների արդիականությունն ու թարմությունը նաև մեր օրերում: Ուորհոլի ստեղծագործությունը շարունակում է ոգեշնչել դիզայներներին և արվեստագետներին, նրա աշխատանքները մինչ օրս համարձակություն են ներշնչում նորաձևության դիզայնի մեջ՝ խրախուսելով դիզայներներին ջնջել արվեստի և հագուստի միջև եղած սահմանները:



Նկ. 1. Versace նորաձևության տան 1991 թ. գարուն-ամառ հավաքածուն




Նկ. 2. Versace նորաձևության տան 2017 թ. գարուն-ամառ հավաքածուն

2010-ների կեսերից մինիմալիզմը և գույսպ ոճը դադարեցին արտացոլել ժամանակակից աշխարհը: Այս շրջանի հավաքածուները հիմնականում հիմնված էին գրաֆիկական տարրերի վրա՝ տարբերանշաններ, նախշեր և այլն: Դրանք հմտորեն մշակվել և կիրառվել են այնպիսի խոշոր նորաձևության տների կողմից, ինչպիսիք են՝ Valentino-ն (նկ. 3), Prada-ն (նկ. 4) և այլն [5]:




Նկ. 3. Valentino նորաձևության տան 2014 թ. հավաքածուն



Նկ. 4. Prada նորաձևության տան 2020 թ. հավաքածուն


Նկարիչները սկսեցին ավելի ու ավելի շատ փորձարկումներ կատարել գրաֆիկական խոշոր էլեմենտների ու պատկերների հետ (նկ. 5): Հազուստի մեջ շեշտադրվում էր կոնստրուկտիվիզմը, տարբերանշանների հետ խաղը, մաքսիմալիզմը, հակադրական գունային համադրությունները և թվային տեխնոլոգիաների կիրառությունը: Այս միտմանը բնորոշ են անհեթեթ ու անհամատեղելի թվացող տարրերը, գույների ու նախշերի անսպասելի համադրությունները, որոնք կիրառվում են նաև ժամանակակից գովազդային պաստառներում:



Նկ. 5. Prada նորաձևության տան 2014 թ. հավաքածուն

Նախշերը գրաֆիկական դիզայնում հաճախ կիրառվող էլեմենտներ են՝ սկսած փաթեթավորման դիզայնից մինչև կայքերի դիզայն և այլն: Ըստ սահմանման նախշն առաջանում է տարրիկամ մոտիվի կրկնությունից [6] և հագուստի մեջ այն ակտիվ սկսել է օգտագործվել 2000-ներից: Նախշերի առատությունը նորարար ու թարմ լուծում էր, քանի որ այն ամբողջովին հակառակվում էր դասական ու մինիմալիստական ոճին:

2023 թ. աշնանն իտալական Valentino նորաձևության տունը ներկայացրեց հագուստի և նորաձևության այլ պարագաների զարուհ-ամառ հավաքածուն՝ ամբողջությամբ նվիրված իր տարբերանշանին (նկ. 8) [7]:



Նկ. 6. Valentino նորաձևության տան տարբերանշանից ստեղծված գրաֆիկական նախշեր




Նկ. 7. Valentino նորաձևության տան տարբերանշանը

Բարձրահարթակով քայլում էին մոդելներ, որոնց ոչ միայն զգեստները, այլև դեմքերը և ներքնազգեստը զարդարված էին գրաֆիկական նախշերով (նկ. 6), որոնք ստեղծված էին Վալենտինո նորաձևության տան տարբերանշանից (նկ. 7): Տարբերանշանը 1968 թ. ստեղծել է նորաձևության տան հիմնադիր Վալենտինո Գարավանին [8]:



Նկ. 8. Valentino նորաձևության տան 2023 թ. հավաքածուն

Արվեստաբանները և արվեստի սիրահարները 93-ամյա Յայոյ Կուսամայի մասին գիտեն ոչ միայն Ճապոնիայում, նրա տպավորիչ աշխատանքների ցուցահանդեսները կլիումետրանոց հերթեր են ստեղծում ամբողջ աշխարհում: Նկարչուհու ստեղծագործության գլխավոր հայեցակարգն առաջին հայացքից պարզ թվացող կետն է (նկ. 9): «Մեր մոլորակն ընդամենը մի կետ է, մեկ սիսեռ՝ տիեզերքում գտնվող միլիոնավոր այլ աստղերի մեջ, իսկ կետերը դեպի անսահմանություն տանող ճանապարհն են» (Յայոյի Կուսամա [9]):



Նկ. 9. Յայոյի Կուսամայի կողմից ստեղծված գրաֆիկական նախշ



Նկ. 10. Louis Vuitton նորաձևության տան 2012 թ. հավաքածուն

Կուսաման և Louis Vuitton-ը 2012 թ. ներկայացրել են իրենց առաջին համատեղ «Creating Infinity» նախագիծը (նկ. 10), այնուհետև համագործակցությունը դարձավ ֆրանսիական նորաձևության տան ամենահաջող հավաքածուներից մեկը: Նկարչուհու համարձակ ստեղծագործությունները զարդարել են ապրանքանիշի հագուստները, պայուսակները և այլ պարագաները, այնպիսի իրարանցում առաջացնելով, որ 10 տարի անց թիմը կրկին հրավիրել է նրան ստեղծագործական համագործակցության:



Նկ. 11. Louis Vuitton նորաձևության տան 2022 թ. հավաքածուն 2022թ. հավաքածուն




Նկ. 12. Louis Vuitton նորաձևության տան խանութ-սրահը Փարիզում

Տասը տարի անց Louis Vuitton-ը թողարկում է իր երկրորդ համագործակցությունը Կուսամայի հետ: 2022 թ. նորաձևության տունը ներկայացրեց «Creating Infinity» հավաքածուի երկրորդ մասը (նկ. 11): Կուսամայի կետերից ստեղծված բազմերանգ գրաֆիկական նախշերն այս անգամ զարդարեցին ոչ միայն հագուստն ու նորաձևության պարարագաները՝ այլ նաև դարձան մի ամբողջ գովազդային արշավի խորհրդանիշ (նկ. 12) [10]:



Նկ. 13. Alexander Mcqueen նորաձևության տան 1999 թ. հավաքածուն



Նկ. 14. Alexander Mcqueen նորաձևության տան 2022 թ. հավաքածուն

1999 թ. թիվ 13 գարուն-ամառ հավաքածուն համարվում է Ալեքսանդր Մաքքուինի ամենավառ աշխատանքներից մեկը: Այս հավաքածուն հայտնի դարձավ նույնիսկ նորաձևության աշխարհի սահմաններից դուրս, որի շնորհիվ բացվեց նորաձևության նոր դարաշրջան, որն այժմ սերտորեն միահյուսված է տեխնոլոգիայի հետ [11]: Այս աշխատանքում Ալեքսանդր Մաքքուինն ուսումնասիրել է մարդու և տեխնոլոգիայի կապը և ռոբոտացման դարաշրջանի հանդեպ մարդկության անհանգստությունն ու վախը: Մոդել Շարլոտ Հարլոուի բարձրահարթակ մուտքը վերաբերում էր Ալֆլերդ Հիչքոքի «Psycho» ֆիլմի հայտնի տեսարանին ցնցուղի տակ, երբ մարդասպանը դանակով հարվածում է գլխավոր հերոսուհուն: Այսպիսով, Շարլոտը, ինչպես ֆիլմի հերոսուհին, պաշտպանվում է ռոբոտներից, ասես մահացու դանակից: Մակայն արյան փոխարեն ռոբոտների օգնությամբ զգեստի վրա լցվում է դեղին և սև ներկ, ինչի շնորհիվ պատկերվում է հետաքրքիր դիզայնով նախշ (նկ. 13) [12]: Տվյալ նախշի մոտիվներն օգտագործվել են նաև McQueen նորաձևության տան 2022 թ. հավաքածուի մեջ (նկ. 14):

Եզրակացություն

Գրաֆիկական դիզայնը նորաձևության ոլորտում ոչ միայն ապրանքանիշը ներկայացնելու և գովազդելու միջոց է, այլ նաև բուն հագուստի ստեղծման մաս: Գրաֆիկական դիզայնն էական նշանակություն ունի նորաձևության ապրանքանիշերի համար, քանի որ այն օգնում է ճանաչելի տեսողական ինքնություն ստեղծելուն: Հագուստի մեջ օգտագործվող էլեմենտները, տարբերանշանները, փաթեթավորումը, պիտակները, պաստառները և գովազդային այլ նյութերը, որոնք ստեղծված են գրաֆիկական դիզայներների կողմից, ուշադրություն գրավելու և սպառողների մոտ տեսողական հաղորդակցուղի ստեղծելու ամենաարդյունավետ միջոցներն են: Այն ապրանքանիշը, որն օգտագործում է գրաֆիկական դիզայնի սկզբունքներ իր նորաձևության հավաքածուների մեջ, կարող է հանգեցնել սպառողների համար ավելի գրավիչ և հայեցակարգային առումով հարուստ հագուստի տարբերակների ստեղծմանը:

Ըստ էության, գրաֆիկայի և նորաձևության դիզայնի միավորումը միայն արվեստի երկու ձևերի խառնուրդը չէ, դա մեզ շրջապատող աշխարհը զգալու և դրա հետ փոխազդելու նոր միջոց ստեղծելու մասին է: Այն ցույց է տալիս, որ դիզայնը ոչ միայն ֆունկցիոնալ, այլ նաև արտահայտման ձև է, որը կարող է գաղափարներ և զգացմունքներ փոխանցել: Նորաձևության և գրաֆիկական դիզայնի էվոլյուցիան վկայում է մարդկային ստեղծագործության և հնարամտության մասին, որը հարմարվում է սոցիալական փոփոխություններին և տեխնոլոգիական առաջընթացին:

Այսպիսով, գրաֆիկական դիզայնը կարևոր դեր է խաղում նորաձևության ոլորտում՝ օգնելով ստեղծել յուրահատուկ դիզայն: Գրաֆիկական դիզայնի և նորաձևության ոլորտի փոխազդեցությունն ու համագործակցությունը ստեղծում են թարմ և նոր գաղափարներ, որոնք ազդում են երկու ոլորտների զարգացման վրա: Գրաֆիկական դիզայնը հզոր գործիք է նորաձևության տեսողական լեզուն ստեղծելու և դրա գեղագիտությունը հաղորդելու համար:

Գրականության ցանկ

- [1] **Jose Teunissen**, Fashion, Graphic Design & the Body, Terra Publishing, London, England, 2008, p. 13
- [2] <https://www.hongkongda.com/the-intersection-of-graphic-and-fashion-design/>
- [3] **Э. Уорхол, П. Хэкетт**, ПОПизм. Уорхоловские 60-е, Ад Маргинем Пресс, Москва, Россия, 2016, 352 с.
- [4] <https://www.marieclaire.ru/moda/10-samykh-neveroyatnykh-platev-versace-ot-tropicheskogo-naryada-dzhennifer-lopes-do-mini-kostyumov-princessy-diany/>
- [5] <https://umagazine.ru/moda/trends/graficheskiy-dizayn-i-moda-kakie-vizualnye-trendy-vebamozhno-uvidet-na-podiume/>
- [6] **Richard M. Proctor**, Principles of Pattern Design, Reprint edition by Van Nostrand Reinhold Company Publisher, Dover Publications, New York, United States of America, 1990, 144 p.
- [7] <https://skillbox.ru/media/design/fashion-patterns/>
- [8] <https://1000logos.net/valentino-logo/>
- [9] **Yayoi Kusama**, Infinity net: the autobiography of Yayoi Kusama, Tate Publishing, London, England, 2012, 256 p.
- [10] <https://design-mate.ru/read/an-experience/louis-vuitton-x-yayoi-kusama-collaboration>
- [11] **Э.Уилсон**, Александр Маккуин. Кровь под кожей, Центрполиграф, Москва, Россия, 2019, 400 с.
- [12] <https://bleeckerstreetmedia.com/editorial/films-behind-alexander-mcqueens-fashion>

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ГРАФИЧЕСКОГО ДИЗАЙНА В СФЕРЕ МОДЫ

Клара Самвеловна Маргарян

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
km2010ha@gmail.com*

В статье рассматривается значение и роль графического дизайна в индустрии моды. Цель статьи – показать, что графический дизайн, помимо того, что является средством рекламы продукта, является еще и частью самого дизайна одежды. Рассмотрено влияние графического дизайна на моду с 90-х годов до наших дней и то, как мода вдохновляет графических дизайнеров и наоборот. Обсуждаются также, какие принципы и приемы графического дизайна используются в современной индустрии моды и в каких форматах сотрудничают эти две сферы. Статья может служить учебным материалом для студентов и специалистов, изучающих область графического дизайна и моды, а также может способствовать развитию этих сфер в Армении.

Ключевые слова: *графический дизайн, мода, тенденция, графические узоры, современные мотивы*

ROLE AND IMPORTANCE OF GRAPHIC DESIGN IN FASHION

Klara Margaryan

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA
km2010ha@gmail.com*

The article examines the importance and role of graphic design in the fashion industry. The purpose of the article is to show that graphic design, in addition to being a means of advertising a product, is also part of fashion design itself. The article examines the influence of graphic design on fashion from the 90s to the present day and how fashion inspires graphic designers and vice versa. The article discusses what principles and techniques of graphic design are used in the modern fashion industry, as well as the formats in which these two industries cooperate. The article can serve as educational material for students and professionals studying the field of graphic design and fashion, and can also contribute to the development of these fields in Armenia.

Keywords: *graphic design, fashion, trend, graphic patterns, modern motives*

Մարգարյան Կլարա Սամվելի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Դիզայնի ամբիոն, դասախոս, (+374)96955321, km2010ha@gmail.com

Маргарян Клара Самвеловна (РА, г.Ереван)-НУАСА, кафедра Дизайна, преподаватель, (+374)96955321, km2010ha@gmail.com

Margaryan Klara (RA, Yerevan)- NUACA, department of Design, lecturer, (+374)96955321, km2010ha@gmail.com

Ներկայացվել է՝ 09.01.2025թ.

Գրախոսվել է՝ 10.02. 025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

ՆՈՐ ԿԻՆԵՄԱՏԻԿ ՄԵՑՄԱՍԵԿՈՒՄԻՉ ՀԵՆԱՐԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արման Հայկի Մեսրոպյան

Ա. Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ, ք. Գյումրի, ՀՀ
mesropyanarman99@gmail.com

Ներկայացված են նոր սեյսմամեկուսիչ կինեմատիկ հենարան և տեսական մեթոդաբանություն այդ հենարանի հաշվարկային վերլուծության համար: Կատարվել է տեսական վերլուծության հիման վրա ստացված սեյսմամեկուսիչ հենարանի բաղկացուցիչ մասերի, որպես մեկ համակարգ թվային հաշվարկային վերլուծություն, և որոշվել է դրա կիրառման օպտիմալությունը: Բոլոր հաշվարկները կատարվել են ուղղաձիգ բեռնվածքի հաշվառմամբ, թվային վերլուծության համար կիրառելով վերջավոր տարրերի մեթոդը: Վերլուծության արդյունքում ստացված տվյալները վկայել են, որ սեյսմամեկուսիչ հենարանը պիտանի է դինամիկ բեռնվածքների ազդեցության հաշվառմամբ համապարփակ ուսումնասիրության համար: Խորհուրդ է տրվում դիտարկել մշակված հաշվարկային մոդելի կիրառելիությունը կառույցներում:

Բանալի բառեր. սեյսմամեկուսիչ հենարան, սեյսմիկ բեռնվածք, երկաթբետոն, վերջավոր տարրերի մեթոդ

Ներածություն


Ժամանակակից շինարարության մեջ մեծ տարածում ունի տարբեր տիպի սեյսմամեկուսացման մեթոդներով [1-8] կառույցների սեյսմաանվտանգության բարձրացումը, որի արդիակա-նությունը բացատրվում է երկրազնդի տարբեր հատվածներում տեղի ունեցող երկրաշարժերով և նոր երկրաշարժավտանգ օջախների բացահայտմամբ, որի հետևանքների մեղմման և այլ հիմնախնդիրների լուծման գործում սեյսմամեկուսիչ համակարգերն արդյունավետ են համարվում:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը գտնվում է բարձր սեյսմակտիվ գոտում, հաշվի առնելով այդ փաստը, անհրաժեշտ է նախագծել հուսալի և երկրաշարժադիմացկուն կառույցներ, որոնց ամրության և կայունության ապահովումը համարվում է ժամանակակից շինարարության գլխավոր խնդիրներից մեկը: Կարևոր է համարվում նաև կառույցների տնտեսապես շահավետության ապահովումը: Առաջացած հարցերի լուծման ուղիներ կարող են հանդիսանալ գոյություն ունեցող սեյսմամեկուսիչ համակարգերի կիրառումը [1-3], ինչպես նաև նոր սեյսմամեկուսացման համակարգերի ստեղծումը և դրանց արդյունավետ ներառումը կրող համակարգերում, որը տվյալ աշխատության հիմնական թեման է, մասնավորապես, ներկայացվում է նոր սեյսմամեկուսացման համակարգ, որը պատկանում է կինեմատիկ հենարանների դասին [1- 8]:

Այսպիսով, սեյսմամեկուսացման համակարգերի ստեղծումը և տեսական և թվային վերլուծությունների միջոցով դրանց կիրառելիության ապահովումն արդիական և կարևոր խնդիրներ են:

Նյութեր և մեթոդներ

Դիտարկված է կինեմատիկ սեյսմամեկուսիչ հենարան (նկ. 1), որը բաղկացած է՝ 1-երկաթբետոնե բաժակից, որի չափերը բխում են ներկառուցված համակարգի չափերից, 2-մետաղական հոծ կամ սնամեջ գլաններից, որոնք տեղադրվում են երկու հարթություններում հորիզոնական առանցքների նկատմամբ սեյսմամեկուսացում ապահովելու համար, 3-պողպատե հոծ գլաններից, որոնք խարսխվում են երկաթբետոնե բաժակի պատերում և ապահովում գլանների պտույտը սեփական ծանրության կենտրոնի նկատմամբ, 4-առաձգական սահմանափակիչից, որը սեղմման զսպանակ է և նախատեսված է հորիզոնական տեղափոխությունները սահմանափակելու և տատանողական համակարգը նախագծային դիրք վերադարձնելու համար, 5-կետային հիմքից, որի դերը տվյալ դեպքում ուղղահայաց կենտրոնացված կամ բաշխված բեռները սեյսմամեկուսիչ հենարանը կազմող տարրերի վրա վերաբաշխումն է: Փաստացի սեյսմամեկուսիչ հենարանը նախատեսված է կետային հիմքերի հետ ինտեգրվելու համար, որն իր հերթին որոշակիորեն սահմանափակում է դրա կիրառումը ճարտարապետական առանձնահատկություններ ունեցող և հատակագծում խիստ անկանոն շինություններում, սակայն բազմահարկերում կարող է հնարավորություն տալ արդյունավետ փոխարինել տնտեսապես ոչ շահավետ հոծ սալի տեսքով հիմքերին [8, 9], ինչպես նաև յուրաքանչյուր տիպի կառույցում ներառվելով՝ կրճատել ընդհանուր կրող համակարգի նյութաձախար:



Նկ. 1. Սեյսմամեկուսիչ համակարգի սխեման

Տվյալ աշխատության շրջանակներում իրականացվել է սեյսմամեկուսացման համակարգը կազմող տարրերի հարմարադասման և ընտրման մասին ընդհանուր ակնարկ, ինչպես նաև հաշվարկային վերլուծություն ոչ գծային դեֆորմատիվ մոդելով ստատիկ բեռնավորման պայմաններում, տվյալ սեյսմամեկուսացման համակարգի առանձնահատկությունները և հետագա դինամիկ ազդեցությունների հաշվառմամբ ուսումնասիրության ռացիոնալությունը պարզելու և

տվյալ սեյսմամեկուսիչ համակարգի համար մարման լոգարիթմական դեկրեմենտ սահմանելու նպատակով:

Կետային հիմքի ներքանի մակերեսի հաշվարկի համար կիրառվում է առանցքային կենտրոնական սեղմամբ աշխատող հիմքերի համար նախատեսված մեթոդաբանությունը [9-11] որոշակի ձևափոխմամբ՝

$$A_0 = N/R\alpha, \quad (1)$$

որտեղ N -ն ընդհանուր նորմալ ուժն է, R -ը՝ գրունտի հաշվարկային դիմադրությունը, A -ն՝ հուսալիության գործակից, որը հաշվի է առնում բեռնվածության մակարդակը և ընդունվում է

- $0 < N < 100$ տ, $\alpha = 1,00$,
- $100 < N < 150$ տ, $\alpha = 0,95$,
- $150 < N < 200$ տ, $\alpha = 0,90$:

Ավելի մեծ բեռնավորման պարագայում գործակիցը պետք է հաշվարկել միջարկման օգնությամբ: Տվյալ դեպքը դասական պատկերացմամբ չի համապատասխանում կետային հիմքի հաշվարկի մեթոդին, սակայն հաշվարկային վերլուծությունները ցույց են տալիս, որ (1) հավասարումից օգտվելու պարագայում ստացվում են նույնական արդյունքներ, որոնք բավարարում են տվյալ դեպքում կետային հիմքի, որպես բաշխիչ տարր հանդես գալու հիմնական պահանջին, իսկ հիմքի բարձրությունը ստացվում է՝ ելնելով ճգմանցման հաշվարկի նորմատիվային տեսությունից [12]:

Գլանները տվյալ խնդրում ընդունվում են հոծ և հատակագծում դասավորվում են այնպես, որ յուրաքանչյուրի բեռնավորման մակերեսները լինեն հավասար, իսկ տրամագիծը որոշվում է, ելնելով Հերցի կոնտակտային տեսությունից և անուղղակի ամրանի բացակայության դեպքում տարրերի տեղական սեղմման հաշվարկից [9-11], ապահովելով որոշակի արդարացված պաշար և ավելի պարզ հավասարում՝

$$P_0 = 2N/\pi bL \leq \psi R_{b,loc}, \quad (2)$$

$$b = \sqrt{4NR/\pi LE}, \quad (3)$$

որտեղ N -ն ընդհանուր նորմալ ուժն է, R -ը՝ գլանի շառավիղը, L -ը՝ գլանի երկարությունը (կոնտակտի գոտում), E -ն՝ արդյունավետ էլաստիկ մոդուլ, b -ն կոնտակտի գոտու լայնությունը, $R_{b,loc}$ -ը սեղմող ուժի տեղական ազդման դեպքում բետոնի հաշվարկային դիմադրությունն է ըստ սեղմման, ψ -ն գործակից է, որն ընդունվում է հավասար 1,0 տրորման մակերեսով տեղական բեռնվածքի հավասարաչափ և 0,75՝ անհավասարաչափ բաշխման դեպքում:

(2) հավասարումից ստացվել է կոնտակտային գոտու լայնությունը և տեղադրվել (3)-ում, որտեղից էլ ստացվել է գլանների շառավղի որոշման բանաձևը՝

$$R = NE/\pi LR_{b,loc}^2 \psi^2: \quad (4)$$

Երկաթբետոնե բաժակի հատակի սալի հաշվարկը կատարվում է ինչպես առաձգական դեֆորմացող կիսատարածության վրա հոծ հիմքի հաշվարկը [9, 10, 13], իսկ ընդհանուր երկրա-

չափական չափերը բխում են կետային հիմքի չափերից և հարամարադասվում են, կախված բաժակից վերև գտնվող կոնստրուկցիաների առանձնահատկություններից:

Առաձգական սահմանափակիչների ընտրությունը կատարվում է այն տրամաբանությամբ, որ սահմանափակվեն սեյսմամեկուսիչի տեղափոխություններն այնպես, որ չխաթարվի կառույցի նորմալ շահագործումը: Սահմանափակիչի համար որպես սահմանային տեղափոխության արժեք կարող են ընդունվել տարբեր մեծություններ [14], կախված կառույցի առանձնահատկություններից, իսկ որպես սահմանափակիչ տարր նախատեսվում է կիրառել զսպանակ կամ ռետինամետաղե հենարան [3, 14]:

Ելնելով վերոնշյալ պայմաններից՝ տեսական եղանակով կատարվել է սեյսմամեկուսիչը կազմող տարրերի ստատիկ հաշվարկ և աղ. 1-ում ներկայացվել են արդյունքները: Հաշվարկներում որպես բեռնվածք (բացի սեփական քաշից) ընդունվել է կենտրոնացված ուղղաձիգ բեռ՝ $Q=2000$ կՆ, բետոն՝ B30 դասի (առաձգականության մոդուլը՝ 32500 ՄՊա) և պողպատ՝ BCՅ3ԿՊ2 դասի (առաձգականության մոդուլը՝ 210000 ՄՊա), հիմնատակ՝ ըստ սեյսմիկ հատկության II կարգի գրունտ (առաձգականության մոդուլը՝ 300 ՄՊա, Պուասոնի գործակիցը՝ 0,3, տեսակարար կշիռը՝ 18 կՆ/մ³), գրունտի հաշվարկային դիմադրությունն ընդունված է՝ $R=50$ Ն/մ² [11-13]: Քանի որ հաշվարկի բնույթը ստատիկ է, սահմանափակիչները տվյալ ինդքում դիտարկված չեն:

Աղյուսակ 1

Սեյսմամեկուսիչ համակարգի տարրերի երկրաչափական տվյալներ

Սնվանում	Հիմք		Գլաններ			Բաժակ	
	Մակերես, <i>մմ</i> ²	Բարձրություն, <i>մմ</i>	Շառավիղ, <i>մմ</i>	Քանակ	Երկարություն, <i>մմ</i>	Մակերեսը հաստակազծում, <i>մմ</i> ²	Հատակի սալի հաստություն, <i>մմ</i>
Տեսական մոդել	48400	60	300	3	2200	160000	500

Արդյունքներ և քննարկում


Դիտարկված հաշվարկի արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ ստացվել են նույնական համամասնությամբ սեյսմամեկուսիչը կազմող տարրեր, որոնց որպես մեկ համակարգ աշխատելու առանձնահատկությունները հասկանալու, ինչպես նաև ստացվող լարումները և դեֆորմացիաները գնահատելու համար կատարվել է թվային վերլուծություն վերջավոր տարրերի մեթոդով, կիրառելով *Ansys* հաշվարկային ծրագրի *Mechanical Analysis* մոդուլը, հաշվի առնելով կիրառված տարրերի նյութի լարումների և դեֆորմացիաների կախվածության ոչ գծային բնույթն ըստ նորմատիվային փաստաթղթերում նախատեսված տրամագրերի [11, 12, 15]: Հիմնատակը մոդելավորվել է որպես մեկ շերտով տարածական գրունտային զանգված (նկ. 2), որի ստվարաշերտի հաստությունը թվապես հավասար է տվյալ պարամետրերով հիմնատակի բա-

ցարձակ սեղմման բարձրությանը [13, 16]: Ստորև ներկայացված են սեյսմա-մեկուսիչ հենարանի, վերջավոր տարրերի մեթոդով որպես մեկ համակարգ հաշվարկի արդյունքները [11-16] (աղ. 2):

Աղյուսակ 2

Սեյսմամեկուսիչ հենարանը կազմող տարրերի լարվածադեֆորմացիոն վիճակը

Անվանում	Կետային հիմք			Գլաններ, վերին շարք		Գլաններ, ստորին շարք		Բաժակ		
	Լարումներ, ՄՊա	Հարաբերական դեֆորմացիա	Լարումներ, ՄՊա	Ճկվածք, մմ	Լարումներ, ՄՊա	Ճկվածք, մմ	Լարումներ, ՄՊա	Հարաբերական դեֆորմացիա		
Թվային մոդել	-6,02	1,90	9,34·10 ⁻⁵	23,60	0,049	-18,02	0,03	-1,16	1,44	4,28·10 ⁻⁵



Նկ. 2. Գրունտային զանգվածի վրա սեյսմամեկուսիչ համակարգի հաշվարկային սխեման

Աղ. 2-ում ցույց են տրված սեյսմամեկուսիչ հենարանի տարրերում լարումների և դեֆորմացիաների առավելագույն արժեքները, որի վերլուծությունից պարզ է դառնում, որ հաշվարկված տարրերը և դրանց պարամետրերը բավարարում են առաջադրված խնդրի պայմաններին:

Եզրակացություն

Դիտարկված տեսական հաշվարկային եղանակով ընտրված սեյսմամեկուսիչ հենարանի բաղադրիչ մասերի, որպես մեկ համակարգ հաշվարկային թվային վերլուծության մոդելում ստացվում է՝ կետային հիմքում 64,8 % թերլարում ըստ սեղմման և 34 % գերլարում ըստ ձգման, բաժակում 93,1% թերլարում ըստ սեղմման և 25% գերլարում ըստ ձգման: Գլաններում ստացված լարումները շատ անգամ ավելի փոքր են թույլատրելիից, իսկ ճկվածքները նույնպես չնչին են, որը չի կարող խոչընդոտել հորիզոնական դինամիկ բեռնվածքների ազդեցության հետևան-

քով դրանց պտտական շարժմանը: Հաշվի առնելով ստացված արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ տվյալ սեյսմամեկուսացման համակարգը պիտանի է և ենթակա դինամիկական հաշվարկային վերլուծության շինարարության ոլորտում դրա կիրառելիությունն ապացուցելու համար, սակայն անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ սեյսմամեկուսիչ հենարանը տնտեսապես էլ ավելի նպատակահարմար դարձնելու համար:

Գրականության ցանկ

- [1] **М.А. Выскребенцева, Ву Ле Куен**, Методы сейсмогашения и сейсмоизоляции с применением специальных устройств, Инженерный Вестник Дона 1 (2019) 20 с.
- [2] **Ю.Д. Черепинский**, Сейсмоизоляция зданий. Строительство на кинематических опорах: Сборник статей, Blue Apple, Москва, 2009, 47 с.
- [3] **А.М. Уздин, С.В. Елизаров, Т.А. Белаш**, Сейсмостойкие конструкции транспортных зданий и сооружений: учеб. пособие, ФГБОУ «Учебно-методический центр по образованию на железнодорожном транспорте», Москва, 2012, 501 с.
- [4] **В.П. Легеза**, Динамика виброзащитных систем с роликовым гасителем низкочастотных колебаний, Проблемы прочности 2 (2004) 106-118 В.
- [5] **В.П. Легеза**, Эффективность виброзащитной системы с изохронным роликовым гасителем, Изв. РАН. Механика твердого тела 2 (2013) 65-76.
- [6] **Г.А. Джинчвелашвили, О.В. Мкртычев**, Эффективность применения сейсмоизолирующих опор при строительстве зданий и сооружений, Транспортное строительство 9(2003) 15-19.
- [7] **В.П. Легеза**, Динамика виброзащитных систем с шаровым гасителем низкочастотных колебаний, Проблемы прочности 3 (2004) 83–94.
- [8] **Г.В. Воронцов, С.И. Евтушенко**, К задаче математического моделирования гасителей колебаний высотных сооружений, Вестник МГСУ 1 (2009) 127–131.
- [9] **Н. Байков, Э. Е. Сигалов**, Железобетонные конструкции, Стройиздат, Москва, 1991, 767 с.
- [10] **В.М. Бондаренко, Д.Г. Суворкин**, Железобетонные и каменные конструкции, Рипол Классик, 1987.
- [11] **ՀՀՇՆ 52-01-2021**. Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ. շինարարական նորմեր, Երևան 2021, 213 էջ:
- [12] **ՀՀՇՆ 53-01-2021**. Պողպատե կոնստրուկցիաներ. շինարարական նորմեր, Երևան 2021, 202 էջ:
- [13] **ՀՀՇՆ IV-10.01.01-2006**. Շենքերի և կառուցվածքների հիմնատակեր. շինարարական նորմեր 2006, 64 էջ:
- [14] **ГОСТ Р 57364-2016**. Устройства антисейсмические. Правила проектирования, Москва, 2017, 132 с.
- [15] **Н. Hertz**, Über die berührung fester elastischer Körper, Journal für die reine und angewandte Mathematik 92 (1881) 156-171.
- [16] **D.M. Practical**, Finite Element Analysis for Mechanical Engineers, FEA Academy, 2020, 639 p.

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ПРИМЕНЕНИЯ НОВОЙ КИНЕМАТИЧЕСКОЙ СЕЙСМОИЗОЛЯЦИОННОЙ ОПОРЫ

Арман Айкич Месропян

*Институт геофизики и инженерной сейсмологии имени А. Назарова, г. Гюмри, РА
mesropyanarman99@gmail.com*

Представлены новая сейсмоизолирующая кинематическая опора и аналитическая база для расчетного анализа этой опоры. На основе аналитического анализа был проведен численный расчетный анализ составных частей сейсмоизоляционной опоры, полученной в виде единой системы, и определена оптимальность ее применения. Все расчеты были выполнены с учетом вертикальной нагрузки с использованием метода конечных элементов для численного анализа. Данные, полученные в результате анализа, подтвердили, что сейсмоизоляционная опора подходит для всестороннего исследования с учетом воздействия динамических нагрузок. Рекомендуется учитывать применимость разработанной расчётной модели в сооружениях.

Ключевые слова: сейсмоизоляционная опора, сейсмическая нагрузка, железобетон, метод конечных элементов

EVALUATION OF THE EFFICIENCY OF IMPLEMENTING A NEW KINEMATIC SEISMIC ISOLATION BEARING

Arman Mesropyan

*Institute of geophysics and engineering seismology after A. Nazarov, Gyumri, RA
mesropyanarman99@gmail.com*

A new seismic isolation kinematic support is presented along with an analytical framework for its computing analysis. Based on the analytical study, a numerical evaluation of the seismic isolation bearing's components as a unified system has been conducted to determine its optimal application. All calculations were performed considering vertical loads, utilizing the finite element method for the numerical analysis. The data obtained from the analysis indicate that the seismic isolation bearing is suitable for a comprehensive dynamic load impact study. It is recommended to consider the applicability of the developed calculation model in structures.

Keywords: seismic isolation bearing, seismic load, reinforced concrete, finite element method

Մեքրոպյան Արման Հայկի (ՀՀ, ք. Երևան) - ԵԻՄԲ, «Մեյսմալիայուն շինարարության և ինժեներային սեյսմոլոգիայի» բաժին, հայցորդ, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Месропян Арман Айкич (РА, г. Ереван)- ИГИС, отдел Сейсмостойкого строительства и инженерной сейсмологии, соискатель, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Mesropyan Arman (RA, Yerevan) - IGES, Department of Earthquake-Resistant Construction and Engineering Seismology, applicant, (+374)98268426, mesropyanarman99@gmail.com

Ներկայացվել է՝ 10.01.2025թ.

Գրախնամվել է՝ 03.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

**ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԻԵՆՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՆՔԵՐՈՒՄ
ՋԵՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿԻՐԱՌՄԱՄԲ**

Սերգեյ Աշոտի Մինասյան*, Աննա Կառլենի Քարամյան, Տիգրան Դավիթի Մանուկյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**sergey.minasyan@yahoo.com*

Հողվածի նպատակն է գնահատել, թե ինչպես է ջերմաստիճանային գրադիենտը փոփոխվում սենյակում, կախված ջեռուցման աղբյուրի տեսակից՝ միայն ջեռուցման մարտկոցի, միայն կասետային տիպի օդորակիչի կամ երկու սարքերի համատեղ շահագործման պայմաններում: Կատարված փորձի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես է այս երկու համակարգերի համակցումն ազդում ջերմային բաշխման համաչափության և հարմարավետության մակարդակի վրա: Այս նպատակին հասնելու համար իրականացվել են մի շարք չափումներ, կիրառելով տարբեր ջերմաստիճանային պայմաններ և չափիչ սարքեր: Կատարվել են սենյակում օդի ջերմաստիճանի, խոնավության չափումներ տարբեր բարձրությունների վրա, ջեռուցման տարբեր աղբյուրների գործարկման ժամանակ: Փորձերի արդյունքում ստացվել է, որ ստատիկ ջեռուցման աղբյուրի (ջեռուցման մարտկոց) և օդի շրջանառությամբ ջեռուցիչի (կասետային տիպի օդորակման ներքին բլոկ) համակցումը նպաստում է սենքում ջերմաստիճանային գրադիենտի հավասարակշռված ուղղահայաց բաշխմանը, ապահովելով ջերմային հարմարավետության բարձր մակարդակ: Արդյունքները կարող են օգտագործվել ինչպես ջեռուցման և հովացման համակարգերի նախագծման, այնպես էլ դրանց կիրառման նպատակահարմարության գնահատման համար:

***Բանալի բառեր.** ջերմաստիճանային գրադիենտ, ջեռուցման մարտկոց, օդային ջեռուցում, ջերմային հարմարավետություն, էներգաարդյունավետություն*

Ներածություն

Ջերմաստիճանային բաշխումը փակ տարածքներում հանդիսանում է ինչպես հարմարավետության, այնպես էլ էներգաարդյունավետության հիմնական գործոններից մեկը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարբեր տեսակի ջեռուցման և օդորակման համակարգերի օպտիմալ համադրումը հնարավորություն է տալիս բարելավել ջերմային հարմարավետության մակարդակը, նվազեցնելով էներգիայի սպառումը [1-3]: Հարմարավետության ապահովումը հատկապես կարևոր է մարդկանց մշտական գտնվելու վայրերում, քանի որ մարդկանց կենսաբանական ռիթմերը զգայուն են ջերմաստիճանային տատանումների նկատմամբ: Սենյակում ջերմաստիճանային գրադիենտը բնութագրում է ջերմաստիճանի փոփոխությունը բարձրության և տարածության վրա: Ավանդական ջեռուցման մարտկոցները հիմնականում ապահովում են ջերմության ուղղահայաց բաշխումը, որը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ հատակի մոտ

սառն է, իսկ առաստաղի մոտ՝ տաք: Կասետային տիպի օդորակման ներքին բլոկի կիրառումը կարող է լուծել այս խնդիրը՝ օժանդակելով օդի հոսքի հավասարաչափ բաշխմանը:

Տվյալ հետազոտությունն իրականացվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) Ջերմագազամատակարարման և օդափոխության ամբիոնի (ՋԳՄՕ) հովացման և ջեռուցման ֆրեոնային կենտրոնացված մուլտիզոնային համակարգերի լաբորատոր սենքում (երկ. 6,7 մ, լայն. 4,6 մ, բարձ. 3,8 մ): Փորձը կատարվել է ջեռուցման սեզոնին, մի քանի օրերի ընթացքում: Ջերմային աղբյուրների և չափիչ սարքերի դիրքը պատկերված է նկ. 1 և նկ. 2-ում:



Նկ. 1. Լաբորատոր սենքի հատակագիծ



Նկ. 2. Լաբորատոր սենք

Որպես չափիչ սարքեր օգտագործվել են՝ կոնտակտային ջերմաչափեր, խոնավաչափեր և ինֆրակարմիր ջերմացույց, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են աղ. 1-ում: Սարքավորումների այս համալիրը հնարավորություն է տալիս գրանցել ջերմաստիճանային տվյալներ ինչպես օդի, այնպես էլ հատակի և պատի մակերևույթների վերաբերյալ: Օգտագործելով այս միջոցները՝ հնարավոր է գնահատել ոչ միայն ջերմային բաշխման հավասարաչափությունը, այլև դրա ազեցությունը սենյակի ընդհանուր ջերմային հարմարավետության վրա [4-6]:

Աղյուսակ 1


Փորձերում օգտագործված չափիչ սարքերի տեխնիկական տվյալները

Անվանումը	Տեսակը	Սարքի մակնիշը	Չափման տիրույթը
Ջերմաչափ	կոնտակտային	техноак ТК-5	-20...+50 °C
Խոնավաչափ	կոնտակտային	-	0...100 %
Ինֆրակարմիր ջերմացույց	-	Testo 876	-


Նյութեր և մեթոդներ

Փորձը կատարվել է նախապես չջեռուցված, փակ սենքում՝ բացառելով ջերմային այլ աղբյուրների առկայությունը: Փորձերի տևողությունը 6 օր է, 6...8 ժամ՝ յուրաքանչյուրը: Ուղղահայաց ջերմաստիճանային բաշխումը գնահատելու համար կատարվել են չափումներ՝ հատակից 0,1 մ,

1,5 ս, 2,2 ս բարձրությամբ մակարդակների վրա կոնտակտային ջերմաչափերի միջոցով: Ինֆրակարմիր ջերմացույցի կիրառումը հնարավորություն է տվել չափել պատերի, հատակի և առաստաղի մակերեսների ջերմաստիճանը, ինչը կարևոր է ջերմային ճառագայթման ազդեցությունը հասկանալու համար [7, 8]: Ստացված տվյալներն օգտագործվել են ջերմաստիճանային դաշտերի պատկերավոր ներկայացման համար (նկ. 3, 4):



Նկ. 3. Ինֆրակարմիր ջերմացույցի պատկեր 1



Նկ. 4. Ինֆրակարմիր ջերմացույցի պատկեր 2

Փորձը ներառում է հետևյալ փուլերը:

1. Օր՝ առաջին, երկրորդ: Նախքան ջեռուցման համակարգի գործարկումը, չափվում են սենքում ըստ բարձրության օդի ջերմաստիճանային բաշխման տվյալները: Այնուհետև միացվում են ջեռուցման մարտկոցները: Մենքում ջերմային հավասարակշռություն հաստատվելուց հետո, ըստ նշված բարձրությունների կատարվում են օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության չափումներ, ֆիքսվում է ջերմաստիճանի կայունացման ժամանակը: Փորձի արդյունքները ներկայացված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Միայն ջեռուցման մարտկոցներով ջեռուցվող սենքում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության արժեքները նշված բարձրություններում, ջերմաստիճանի կայունացման ժամանակը

Չափիչ սարքի տեղադրման բարձրությունը հատակից, H , ս	Արտաքին օդի միջին ջերմաստիճանը փորձի ընթացքում, T_w , $^{\circ}C$	Սենքի օդի նախնական ջերմաստիճանը, T_{1w} , $^{\circ}C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքի օդի ջերմաստիճանը, T_1 , $^{\circ}C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքում օդի հարաբերական խոնավությունը, %	Փորձի տևողությունը, t /ջերմաստիճանի կայունացման ժամանակ
Օր առաջին					
0,5	2,4	15,0	16,7	38,0	8/5,5
1,5		15,7	17,5	37,4	
2,2		16,2	19,1	30,7	
Օր երկրորդ					
0,5	3,4	15,2	16,9	37,5	7/5,2
1,5		15,8	17,5	37,2	
2,2		16,4	19,3	30,5	

2. Օր՝ երրորդ, չորրորդ: Նախքան սենքի ջեռուցումը, նորից կատարվում են ըստ բարձրության օդի ջերմաստիճանային բաշխման չափումները: Այս անգամ ջեռուցման համար գործարկվում է միայն կասետային տիպի օդորակման ներքին բլոկը, որի դեպքում սենքի տաքացումը կատարվում է օդային ջեռուցմամբ, օդի ուղղորդված շրջանառության շնորհիվ: Ջերմային հավասարակշռության հաստատումից հետո, ըստ նշված բարձրությունների չափվում և գրանցվում են օդի ջերմաստիճանը, ինչպես նաև հարաբերական խոնավությունը:

Աղյուսակ 3

Մենքում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության արժեքները նշված բարձրություններում օդի ուղղորդված շրջանառությամբ ջեռուցման դեպքում, ջերմաստիճանի կայունացման ժամանակը

Չափիչ սարքի տեղադրման բարձրությունը հատակից, $H_1, մ$	Արտաքին օդի ջերմաստիճանը, $T_w, ^\circ C$	Սենքի օդի նախնական ջերմաստիճանը, $T_{2ա}, ^\circ C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքի օդի ջերմաստիճանը, $T_2, ^\circ C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքում օդի հարաբերական խոնավությունը, %	Փորձի տևողությունը, ժ/ջերմաստիճանի կայունացման ժամանակ
Օր երրորդ					
0,5	5,8	14,5	17,2	33,6	6,5/4,5
1,5		14,8	18,1	31,8	
2,2		15,2	19,1	30,5	
Օր չորրորդ					
0,5	6,2	14,8	17,3	33,4	6,0/4,2
1,5		15,3	18,4	31,5	
2,2		15,7	19,5	30,2	

3. Օր՝ հինգերորդ, վեցերորդ: Փորձը կրկնվում է նույն հաջորդականությամբ, այս անգամ ջեռուցման նպատակով կես հզորությամբ միաժամանակ գործարկվում են ջեռուցման մարտկոցը և կասետային բլոկը: Ջեռուցման երկու աղբյուրների համակցության տվյալները ներկայացված են աղ. 4-ում:


Աղյուսակ 4

Մենքում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության արժեքները նշված բարձրություններում համակցված ջեռուցման դեպքում, ջերմաստիճանի կայունացման ժամանակը

Չափիչ սարքի տեղադրման բարձրությունը հատակից, $H_1, մ$	Արտաքին օդի ջերմաստիճանը, $T_w, ^\circ C$	Սենքի օդի նախնական ջերմաստիճանը, $T_{3ա}, ^\circ C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքի օդի ջերմաստիճանը, $T_3, ^\circ C$	Ջերմաստիճանային կայունացումից հետո սենքում օդի հարաբերական խոնավությունը, %	Փորձի տևողությունը, ժ/ջերմաստիճանի կայունացման ժամանակ
Օր հինգերորդ					
0,5	3,2	14,8	17,9	30,1	5,5/3,5
1,5		15,1	18,2	29,5	
2,2		15,6	19,4	29,2	
Օր վեցերորդ					
0,5	4,2	14,8	18,0	30,0	5,5/3,2
1,5		15,3	18,4	29,3	
2,2		15,8	19,4	29,2	

Արդյունքներ և քննարկում.

Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ միայն ջեռուցման մարտկոցներով ջեռուցման դեպքում ջերմաստիճանային բաշխումն անհավասարաչափ է՝ առաստաղի մոտ տաք օդի կուտակման շնորհիվ առաջանում է ջերմաստիճանային զգալի տարբերություն հատակի և առաստաղի միջև՝ 2,1 °C (նկ. 5) [9]: Մենքում կայուն ջերմաստիճանի հաստատման ժամանակը նույնպես բավականին մեծ է, գրեթե 5,2...5,5 ժամ (աղ. 2):



**Նկ. 5. Մենքում ջերմաստիճանի փոփոխման գրաֆիկ կախված չափման բարձրությունից.
 T1-Ներսի օդի ջերմաստիճան՝ օր 1, 2
 T2-Ներսի օդի ջերմաստիճան՝ օր 3, 4
 T3-Ներսի օդի ջերմաստիճան՝ օր 5, 6**

Հատկանշական է, որ մարտկոցի և կասետային տիպի օդորակման ներքին բլոկի համատեղ աշխատանքը նպաստեց ավելի արագ ջերմային հավասարակշռության հաստատմանը, ինչը զգալիորեն բարելավեց ջերմային հարմարավետության մակարդակը: Այնուամենայնիվ, օդորակիչի ակտիվացումը հանգեցրեց օդի հոսքի ավելացման, ինչը կարող է ցանկալի չլինել, կախված տարածքի բարձրությունից և այնտեղ գտնվող մարդկանց գործունեությունից [10-12]: Փորձերի արդյունքում ստացված ջերմաստիճանի կայունացման ժամանակը, *t*, ժամ, ևս կարևոր է ոչ միայն ջերմային հարմարավետության ապահովման, այլև էներգիայի արդյունավետության տեսանկյունից, ինչը կարևոր է ժամանակակից համակարգերի նախագծման համար [13]:

Եզրակացություն

- Ջեռուցման մարտկոցի և օդային ջեռուցման աղբյուրների համակցումը նպաստում է ջերմաստիճանային դաշտի ավելի հավասարակշռված բաշխմանը, ապահովելով բարձր ջերմային հարմարավետություն, ջերմաստիճանի փոփոխությունը՝ 1°C:
- Առաջին անգամ լաբորատոր պայմաններով փորձարկվել է ջեռուցման մարտկոցի (կոնվեկտիվ և ճառագայթային ջերմատվություն) և կասետային օդորակիչի (օդի շրջանառություն) միաժամանակ աշխատանքի դեպքում ջերմաստիճանների փոփոխությունն ըստ

սենքի բարձրության: Փորձի արդյունքների համաձայն առավել արագ ջերմաստիճանալին կայուն վիճակը հաստատվում է տարբեր ջերմադրությունների միաժամանակ աշխատանքի արդյունքում:

Գրականության ցանկ

- [1] **J. Smith, L. Brown**, Thermal Comfort in Modern Buildings, Academic Press., New York, 2015, 320 p.
- [2] **P. Jones, R. Taylor, D. Williams**, Efficient Heating and Cooling Systems. Wiley Publications, London, 2018, 250p.
- [3] **A. Johnson**, Impact of Heating Systems on Indoor Temperature Gradients. Journal of Building Performance (2019) 215-230.
- [4] **Y. Zhang, H. Chen**, Evaluation of Combined Heating and Cooling Systems for Energy Efficiency, Energy and Buildings (2020) 310-325.
- [5] **M. Garcia, S. Lee**, Infrared Thermometry in Building Performance Analysis, Springer-Verlag, Berlin, 2021, 280p.
- [6] **K. Muller**, Case Studies on Thermal Comfort Using Advanced Measurement Tools. International Journal of Energy Research (2020) 190-205.
- [7] **R. Kumar, S. Patel**, Assessing Thermal Gradients in Multi-Zone Indoor Environments. Building Research and Information (2019) 415-430.
- [8] **K. Takahashi**, Innovative Solutions for Sustainable Building Comfort, Kyoto Press, Tokyo, 2022, 220 p.
- [9] **N. Carter, J. Adams**, Building Physics and Thermal Comfort, Oxford University Press, Oxford, 2017, 360 p.
- [10] **T. O'Connor**, Comparative Analysis of Heating Methods in Cold Climates. Journal of Sustainable Architecture (2016) 98-112.
- [11] **Ս.Մ. Քարամյան**, Շենքերի ջերմատեխնիկական հարաչափերի գործիքային չափագրում: Ուսումնասիրողական ձեռնարկ. ՄԱԶԾ, Երևան, 2013, 55 էջ:
- [12] **ՀՀՇՆ22-01-2024**. Շինարարական կլիմայաբանություն. Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր, 259 էջ:
- [13] **P. Mustakallio, R. Kosonen, M. Ruponen, N. Lastovets**, Influence of installation of displacement ventilation diffusers above occupied zone on the vertical temperature gradient in simulated office rooms, E3S Web of conferences CLIMA 2019 Congress 111, 02012 (2019) 5 p., <https://doi.org/10.1051/e3sconf/201911102012>.

АНАЛИЗ ИЗМЕНЕНИЯ ТЕМПЕРАТУРНОГО ГРАДИЕНТА В ПОМЕЩЕНИЯХ ПРИ СОВМЕСТНОМ ИСПОЛЬЗОВАНИИ РАЗЛИЧНЫХ ИСТОЧНИКОВ ОТОПЛЕНИЯ

Сергей Ашотович Минасян*, Анна Карленовна Карамян, Тигран Давидович Манукян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**sergey.minasyan@yahoo.com*

В статье исследовано, как температурный градиент изменяется в помещении в зависимости от использования только радиатора отопления или его сочетания с кассетным кондиционером. Проведённый эксперимент направлен на изучение влияния комбинации этих двух систем на равномерность теплового распределения, уровень комфорта и энергопотребление. Для достижения этой цели было проведено несколько измерений с использованием различных температурных условий и измерительных приборов. Выполнены замеры температуры воздуха и влажности на разных высотах при

различных режимах работы тепловых источников. Результаты могут быть полезны как для проектирования систем отопления и охлаждения, так и для разработки рекомендаций по их применению. Кроме того, исследование включает анализ энергоэффективности этих систем с учётом современных требований к комфорту и экономии ресурсов.

Ключевые слова: температурный градиент, отопительный радиатор, кассетный кондиционер, тепловой комфорт, энергоэффективность

ANALYSIS OF TEMPERATURE GRADIENT CHANGES IN ROOMS WITH THE COMBINED USE OF DIFFERENT HEATING SOURCES

Sergey Minasyan*, Anna Karamyan, Tigran Manukyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*sergey.minasyan@yahoo.com

The purpose of the article is to assess how the temperature gradient changes in a room depending on the use of only a heating radiator or its combination with a cassette air conditioner. The experiment aims to study the impact of combining these two systems on the uniformity of thermal distribution, comfort levels, and energy consumption. To achieve this goal, a series of measurements were conducted under various thermal conditions using measuring devices. Air temperature and humidity were measured at different heights under different operating modes of heat sources. The results of the article can be useful for designing heating and cooling systems as well as for developing recommendations for their application. Additionally, the study includes an analysis of the energy efficiency of these systems, considering modern requirements for comfort and resource conservation.

Keywords: Temperature gradient, heating radiator, cassette air conditioner, thermal comfort, energy efficiency

Մինասյան Սերգեյ Աշոտի, տ.գ.դ., պրոֆեսոր (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, (+374)91408689, sergey.minasyan@yahoo.com, **Քարամյան Աննա Կարլենի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, (+374)98429265, a.karamyan@gmail.com, **Մանուկյան Տիգրան Դավիթի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, հայցորդ (+374)33373708, myan_tigran@mail.ru

Минасян Сергей Ашотович, д.т.н., профессор (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, (+374)91408689, sergey.minasyan@yahoo.com, **Карамян Анна Карленовна, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, (+374)98429265, a.karamyan@gmail.com, **Манукян Тигран Давидович** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, соискатель, (+374)33373708, myan_tigran@mail.ru

Minasyan Sergey, Doctor of Science (engineering), professor (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, (+374)98429265, sergey.minasyan@yahoo.com, **Karamyan Anna, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, (+374)98429265, a.karamyan@gmail.com, **Manukyan Tigran** (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, applicant, (+374)33373708, myan_tigran@mail.ru

Ներկայացվել է՝ 15.01.2025թ.

Գրախոսվել է՝ 10.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

DOI: <https://doi.org/10.54338/18294200-2025.1-10>

ԻՆՏԵՆՏԻՎԱԿԱՆ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՈՒ ՑԱՆՑԵՐ

ՋԵՐՄԱՅԻՆ ՊՈՄՊՈՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄԸ

Կարեն Աշոտի Մովսիսյան

В статье представлены материалы и технологии, используемые для создания настенной графики в интерьерах в 20-м и 21-м веках. В результате исследований выявлено множество инновационных методов и техник, которые применяются в наши дни для создания графических фресок. Применение этих технологий дает специалистам новые возможности для решения проблем в дизайне интерьера. В статье также представлены плюсы и минусы технологий и материалов, используемых в фресковой графике. Подробно рассмотрен каждый метод фресковой графики и используемые материалы, что поможет профессионалам в этой области выбрать наиболее подходящий материал и технологию для фрески, чтобы выполнить работу наилучшим образом. Статья направлена на оказание помощи как дизайнерам-иллюстраторам, так и дизайнерам-проектировщикам в их профессиональной деятельности, а также для ознакомления с современными методами и технологиями, используемыми при получении графических решений в интерьере.

Ключевые слова: материалы, технологии, метод, настенная графика, внутренняя среда, интерьер

**MATERIALS AND TECHNOLOGIES USED IN MURAL GRAPHICS IN INTERIORS
IN THE 20th-21st CENTURIES**

Lusine Petrosyan

*State Academy of Fine Arts of Armenia, Yerevan, RA
Lus8990@gmail.com*

The article presents the materials and technologies used to create mural graphics in the interior in the 20th and 21st centuries. As a result of research, many innovative methods and techniques have been identified that are used today to create graphic frescoes. The use of these technologies gives specialists new opportunities to solve problems in interior design. The article also presents the pros and cons of the technologies and materials used in mural graphics. Each mural graphic method and materials used are discussed in detail to help professionals in the field select the most appropriate material and technology for the mural to get the job done in the best possible way. The article is aimed at providing assistance to both designers and illustrators, both to attract designers to their professional work, and to familiarize themselves with modern methods and technologies used to obtain graphic solutions in the interior.

Keywords: materials, technology, method, wall graphics, mural, internal environment, interior

Պետրոսյան Լուսինե Պետրոսի (ՀՀ, ք. Երևան) - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Դիզայնի ամբիոնի, դասախոս, ասպիրանտ, (+374)98229987, lus8990@gmail.com
Петросян Лусине Петросовна (РА, г. Ереван) – Государственная академия художеств Армении, кафедра Дизайна, преподаватель, аспирант, (+374)98229987, lus8990@gmail.com
Petrosyan Lusine (RA, Yerevan) – State Academy of Fine Arts of Armenia, Lecturer at the Department of Design, PhD student, (+374)98229987, lus8990@gmail.com

Ներկայացվել է՝ 27.11.2024թ.

Գրախոսվել է՝ 16.01.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

ՀՀ ՏԱՐԲԵՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՁԵՐՄԱՍԵԿՈՒՄԻԶ ՇԵՐՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Սպարտակ Հովհաննեսի Սարգսյան*, Արտաշես Լևոնի Պետրոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

*s.sargsyannuaca@gmail.com

ՀՀ-ի կախվածությունը հասնաժողովրդի ներկրումից՝ ՌԴ-ից ստացվող բնական գազից, ստիպում է մասնագետներին մշակել և կիրառել գործուն միջոցներ ներկրվող վառելիքի ֆիզիկական ծավալների, ուստի և պահանջվող դրամական միջոցների կրճատման համար: Միջազգային գների հետ համեմատած, ՀՀ-ում գազի գինը ցածր է, սակայն ազգաբնակչության ցածր վճարունակության պայմաններում դրան առանձնակի ուշադրություն է դարձվում: Նման խնդիրները լինելով պետական նշանակության՝ կատարվել է հետազոտություն և դիտարկվել են ՀՀ տարբեր կլիմայական գոտիներում կառուցված և շահագործվող 9 հարկանի պանելային տիպային շենքերի ջերմատեխնիկական բնութագրերը: Հետազոտությունը ցույց է տվել, որ ՀՀ-ի տարբեր քաղաքներում, կախված կլիմայական պայմաններից, պատող կոնստրուկցիաների և ջերմամեկուսիչ նյութի ջերմատեխնիկական տվյալներից և արժեքից, օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի հաստությունը փոխվում է: Արդյունքում ջերմամեկուսիչ շերտի կիրառումը շինարարական կոնստրուկցիայում տարվա կտրվածքով բերում է ջերմացրտամատակարարման համակարգերում օրգանական վառելիքի և էլեկտրաէներգիայի ծախսի զգալի կրճատման: Կախված ամռան ամիսների արտաքին օդի ջերմաստիճանից, սեզոնի տևողությունից և աստիճան-օրերի թվից, առանձին քաղաքներում բերված են ծախսերը: Մա կնշանակի, որ շերտի օպտիմալ հաստությունը որոշելիս հարկ կա այն որոշել որջ տարվա ընթացքում:

Բանալի բառեր. օպտիմալ մեկուսիչ շերտ, էներգախնայողություն, էներգաարդյունավետություն, կլիմայական գործոններ, բազմաբնակարան շենքեր

Ներածություն

Միավորված Ազգերի Կազմակերպության շրջակա միջավայրի ծրագիրը [1] գնահատում է, որ շենքերը սպառում են համաշխարհային զուբալ էներգիայի մոտ 40 % -ը և ջրի 25 % -ը: Եվրոպական երկրների ջեռուցման կամ հովացման համակարգերում այս իրավիճակը նպաստեց նոր բնապահպանական քաղաքականության մշակմանը, որն օգտագործում է առնվազն 50 % վերականգնվող էներգիա և 75 % համատեղ արտադրվող ջերմության համակցություն [2]: Եվրահանձնաժողովը գնահատել է, որ այս գործողությունները կնպաստեն նվազեցնել ջեռուցման և հովացման նպատակով էներգիայի պահանջարկը 2030-ին՝ 12 %, իսկ 2050-ին՝ 17 %, 2005-ի համեմատ [3]: Նման խնդիրները նվազեցնելու արդյունավետ լուծումը շենքերի արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացումն է: Ջերմամեկուսիչ նյութերը դարձնում են շենքերն ավելի

էներգաարդյունավետ, նվազեցնելով հանաժողովարարական վառելիքի քանակը, որն անհրաժեշտ է հիմնականում ջեռուցման և սառեցման համար և դրանով իսկ նվազեցնելով ածխածնի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի քանակի արտանետումը մթնոլորտ [4]: Շենքի ջերմամեկուսացումը բերում է նաև դրամական ծախսերի խնայողության: Ըստ ջերմամեկուսիչ նյութի ուսումնասիրությունների՝ ջերմահաղորդականության գործակցի [5, 6], ջերմային էներգիայի պահպանման [7, 8], հրդեհասնվտանգության [9, 10] և բնապահպանական ազդեցության [9, 11, 12] կարողանում են կատարել ընտրություն: Ջերմամեկուսիչ նյութերի օպտիմալ շերտի ընտրությունը կախված է նաև կլիմայական պայմաններից, ջեռուցման և հովացման սեզոնների տևողություններից և բնույթից, աստիճան-ժամերից, տվյալ տարածաշրջանում օրգանական վառելիքի արժեքներից: Ըստ ջերմատեխնիկական և տնտեսական հաշվարկների հնարավոր է դառնում կատարել ընտրություն ջերմամեկուսիչ նյութի տեսակի և օպտիմալ հաստության որոշման համար [13-17]:

Նյութեր և մեթոդներ

ՀՀ-ում բնակելի ֆոնդն ունի ջեռուցման համար սպառվող էներգիայի արդյունավետության բարձրացման խնդիր՝ ջերմամեկուսացման բարելավման միջոցով: Տնտեսական զարգացումները և բնակչության կենսամակարդակի բարձրացումը երկարաժամկետ հեռանկարում ակնհայտորեն հանգեցնում են տնային տնտեսությունների կողմից էներգիայի պահանջարկի ավելացման, ինչը նշանակում է, որ առաջիկայում սպառման արդյունավետության առումով կարևորվելու են բնակելի տարածքների և բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման բարելավման հարցերը [18]: Բազմաբնակարան շենքերի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2021 թ. վերջին կազմել է 29 171,1 հազ.մ² կամ հանրապետության բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի 29,1 %-ը [19]: Դիտարկվել են ՀՀ քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Սևան, Կապան) տեղաբաշխված ամենատարածված 9 հարկանի բազմաբնակարան շենքերի մի քանի տիպեր՝ ըստ արտաքին պատող կոնստրուկցիայի և հարկայնության: Դրանք տեղաբաշխված են տարբեր կլիմայական գոտիներում, տարբեր են ջեռուցման և հովացման սեզոնների տևողությունները և աստիճան-օրերը: Ըստ այդմ կատարվել են ջեռուցման և հովացման բեռնվածությունների հաշվարկներ: Արտաքին պատող կոնստրուկցիաների համար ջերմամեկուսիչ են ընտրվել ամենակիրառելիները՝ փրփրապոլիստիրոլը (EPS) և էքստրուդացված պոլիստիրոլը (XPS) [20-24] (աղ. 1):

Աղյուսակ 1

Ջերմամեկուսիչ նյութերի ջերմատեխնիկական բնութագիրը

Ջերմամեկուսիչի անվանումը	Ջերմահաղորդականության գործակցը, $\lambda, \text{W/m}^\circ\text{C}$
Էքստրուդացված պոլիստիրոլ (XPS)	0,034
Փրփրապոլիստիրոլ (EPS)	0,041

Ջեռուցման և հովացման բեռնվածության հաշվարկ [25]: Շենքի ընդհանուր ջերմային բեռը՝

$$Q_{ջերմ. բեռ} = Q_{ջերմ. կոր.} - Q_{ներք. ջերմ.}, \tag{1}$$

որտեղ $Q_{ջերմ. կոր.}$ -ը ջերմային կորուստներն են պատող կոնստրուկցիաներից, $\lambda, Q_{ներք. ջերմ.}$ -ը ներքին ջերմանջատումներն են մարդկանցից, կենցաղային սարքերից, լուսավորությունից, $\lambda :$

$$Q_{ջերմ. կոր.} = Q_{պտ.} + Q_{պհ.} + Q_{առ.} + Q_{հտ.} + Q_{դռ.}, \tag{2}$$

որտեղ

$$Q_{պտ, պհ, առ, հտ, ղռ} = k_{պտ, պհ, առ, հտ, ղռ} F_{պտ, պհ, առ, հտ, ղռ} (t_{ներս} - t_{դուրս}), \quad (3)$$

$k_{պտ}, k_{պհ}, k_{առ}, k_{հտ}, k_{ղռ}$ -ը պատի, պատուհանի, դռան, առաստաղի, հատակի ջերմափոխանցման գործակիցներն են, $\varphi_{տ}/\mu^{\circ}C, F_{պտ}, F_{պհ}, F_{ղռ}, F_{առ}, F_{հտ}$ -ը՝ պատի, պատուհանի, դռան, առաստաղի, հատակի մակերեսները, $\varphi_{տ}, t_{ներս}$ -ը՝ ներսի օդի ջերմաստիճանը, $^{\circ}C, t_{դուրս}$ -ը՝ դուրսի օդի ջերմաստիճանը ջեռուցման սեզոնի ընթացքում, $^{\circ}C$ [26]:

Ներքին ջերմանջատումները՝

$$Q_{ներք. ջերմ.} = Q_{մարդ} + Q_{կենց. սարք}, \quad (4)$$

$Q_{մարդ}$ - ջերմանջատումներն են մարդկանցից՝

$$Q_{մարդ} = q_{մարդ} \cdot n, \quad (5)$$

որտեղ $q_{մարդ} = 115 \varphi_{տ}$ - ը մեկ մարդուց անջատված ջերմության քանակն է հանգիստ վիճակում [27], n -ը՝ բնակիչների քանակը շենքում:

Ջերմանջատումները կենցաղային սարքերից և լուսավորությունից՝

$$Q_{կենց. սարք} = V_{շենք} \cdot q_{կենց. սարք}, \quad (6)$$

որտեղ $V_{շենք}$ -ը շենքի ծավալն է, $\mu^3, q_{կենց. սարք} = 0,003 \varphi_{տ}/\mu^3$ -ը կենցաղային սարքերից և լուսավորությունից անջատված ջերմության քանակն է [28]:

Ամռան սեզոնում ջերմաթափանցումները և ներքին ջերմանջատումները կորոշվեն՝

$$Q_{հով. բեռ} = Q_{ջերմաթափ.} + Q_{ներք. ջերմ.}, \quad (7)$$

որտեղ $Q_{ջերմաթափ.}$ -ը պատող կոնստրուկցիաներից ջերմաթափանցումներն են, $\varphi_{տ}, Q_{ներք. ջերմ.}$ -ը ջերմանջատումներն են մարդկանցից, կենցաղային սարքերից, լուսավորությունից, $\varphi_{տ}$:

$$Q_{ջերմաթափ.} = Q_{պհ} + Q_{պտ.} + Q_{ղռ} + Q_{առ}, \quad (8)$$


որտեղ $Q_{պտ}, Q_{պհ}, Q_{ղռ}, Q_{առ}$ - ը պատից, պատուհանից, դռնից, առաստաղից տեղի ունեցող ջերմաթափանցումներն են, $\varphi_{տ}$:

$$Q_{պտ, առ, ղռ, պհ} = k_{պտ, առ, ղռ, պհ} F_{պտ, առ, ղռ, պհ} (t_{դուրս}^{պայմ} - t_{ներս}), \quad (9)$$

որտեղ $k_{պտ, առ, ղռ, պհ}$ -ը պատի, առաստաղի, դռան, պատուհանի ջերմափոխանցման դիմադրությունն է, $\varphi_{տ}/\mu^{\circ}C, F_{պտ, առ, ղռ, պհ}$ -ը՝ պատի, առաստաղի, դռան, պատուհանի մակերեսը, $\mu^2, t_{դուրս}^{պայմ}$ -ը՝ արտաքին օդի պայմանական ջերմաստիճանը հովացման սեզոնի ընթացքում, $^{\circ}C, t_{ներս}$ -ը՝ սենյակի ներսի ջերմաստիճանը, $^{\circ}C$ [29], իսկ ճառագայթմամբ՝

$$Q_{պհ} = I_{ճառագ.} F_{պհ}, \beta_1 \beta_2 \beta_3, \quad (10)$$

որտեղ $F_{պհ}$ -ն պատուհանի մակերեսն է, $\mu^2, I_{ճառագ.}$ -ը՝ արևի ճառագայթային հոսքը միավոր մակերեսի վրա, $\mu^2, \beta_1, \beta_2, \beta_3$ - ը պատուհանի ստվերապատումը, փոշոտվածությունը, անթափանց շրջանակի մակերեսը հաշվի առնող գործակիցներն են [30]:



Նկ. 1. 9 հարկանի բնակելի շենք.
 ա) - հատակագիծ, բ) - հիմնական ճակատ

Նկ. 2. Պատող կոնստրուկցիա.
 1 - Արթիկ տուֆ, $\delta_1 = 0,02$ մ, $\lambda_1 = 0,52$ Վտ/մ⁰C, 2 - բետոնե լիցք, $\delta_2 = 0,1$ մ, $\lambda_2 = 0,76$ Վտ/մ⁰C, 3 - է/բ պանել, $\delta_3 = 0,16$ մ, $\lambda_3 = 1,92$ Վտ/մ⁰C, 4 - գաջային սվաղ, $\delta_4 = 0,02$ մ, $\lambda_4 = 0,41$ Վտ/մ⁰C

Ըստ ճարտարապետաշինարարական նախագծի (նկ. 1), բնակելի շենքում նախատեսված է 36 բնակարան, որոնք պարփակված են արտաքին պատող կոնստրուկցիաներով. պատ՝ 1638 մ², պատուհան՝ 311 մ², դուռ՝ 48 մ², առաստաղ՝ 324 մ², հատակ՝ 324 մ²: Շենքում բանակիչների թիվը 108 մարդ է: Արտաքին պատող կոնստրուկցիան պանելային տիպի է (նկ. 2), որի ջերմափոխանցման գործակիցը 2,17 Վտ/մ² °C է: Ըստ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի, որոշվել են շենքի ջեռուցման և հովացման բեռնվածությունները: Բնակելի շենքերի համար ջեռուցման սեզոնի տևողությունը պայմանավորված է արտաքին օդի ջերմաստիճանով, երբ այն չի գերազանցում +8 °C: Ջերմային կորուստները պայմանավորված են նաև արևի ճառագայթային հոսքով հորիզոնական և ուղղահայաց մակերևույթների վրա: Նման մոտեցման դեպքում կարելի է անջատել ջերմության աղբյուրը (օրինակ՝ կաթսան), որն էլ կբերի օրգանական վառելիքի խնայողության՝ ըստ գոյություն ունեցող մեթոդների (պայմանական ջերմաստիճանի օգտագործմամբ) [31]: Տարբեր ամիսների արտաքին օդի կլիմայական պայմանների փոփոխության, շենքում ջերմային կորուստներն ըստ հաշվարկային ջերմաստիճանի և խոնավաթափանցելիության կազմում են. Գյումրիում՝ 194,8 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 2,33 կգ/վ է, Երևանում՝ 178,0 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 2,13 կգ/վ է, Վանաձորում՝ 159,3 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 1,9 կգ/վ է, Հրազդանում՝ 182,7 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 2,18 կգ/վ է, Սևանում՝ 159,3 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 1,9 կգ/վ է, Կապանում՝ 136,0 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 1,63 կգ/վ է: Ստորև (աղ. 2) ներկայացված են ջեռուցման սեզոնի ընթացքում վառելիքի ծախսն ըստ ջերմաստիճանային ռեժիմների:

Վառելիքի ծախսն ըստ ջերմաստիճանային ռեժիմների

Քաղաքներ	Վառելիքի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 80/60°C ջերմաստիճանային ռեժիմի, մ ³ /սեզ.	Վառելիքի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 60/40 °C ջերմաստիճանային ռեժիմի, մ ³ /սեզ.	Վառելիքի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 45/25 °C ջերմաստիճանային ռեժիմի, մ ³ /սեզ.
Երևան	23984	23776	23260
Գյումրի	37853	37012	36207
Վանաձոր	25053	24496	23964
Կապան	19723	19285	18866
Հրազդան	38493	37638	36820
Սևան	36732	35916	35135

Ջեռուցման համակարգում ցանցային պոմպերի էլեկտրական էներգիայի ծախսն ըստ ջերմաստիճանային ռեժիմների՝ 80/60 °C, 60/40 °C և 45/25 °C, համապատասխանաբար կկազմի. Գյումրիում՝ 3769, 3758 և 3735 կՎտմ/սեզ., Երևանում՝ 2557, 2541 և 2532 կՎտմ/սեզ., Հրազդանում՝ 3722, 3700 և 3689 կՎտմ/սեզ., Վանաձորում՝ 3342, 3325 և 3312 կՎտմ/սեզ., Սևանում՝ 2969, 2941 և 2928 կՎտմ/սեզ., Կապանում՝ 1910, 1895 և 1878 կՎտմ/սեզ.: Արդյունքում նկատելի է ծախսվող էլեկտրական էներգիայի խնայողություն՝ շնորհիվ ջերմաստիճանային ռեժիմում կինեմատիկական մածուցիկության և ջերմունակության նվազման: Համանման ձևով իրականացվել է նաև հովացման բեռնվածության հաշվարկ, կախված արտաքին օդի ջերմաստիճանից, հովացման սեզոնի տևողությունից և պայմանական ջերմաստիճանից: Արդյունքում ստացվում է էլեկտրաէներգիայի ծախսը սարքավորումների վրա (սառնարանային մեքենա, ֆանկոյլ, շրջանառու պոմպ) սեզոնի ընթացքում: Հաշվի առնելով վերը բերված մեթոդներն ու կլիմայական պայմանների փոփոխությունները՝ շենքում հովացման բեռնվածությունները հաշվարկային ջերմաստիճանում կազմում են. Գյումրի՝ 135,2 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 6,45 կգ/վ է, Երևան՝ 154,8 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 7,0 կգ/վ է, Հրազդան՝ 120,6 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 5,76 կգ/վ է, Վանաձոր՝ 122,1 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 5,83 կգ/վ է, Սևան՝ 134,2 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 6,41 կգ/վ է, Կապան՝ 152,9 կՎտ, երբ ջերմատարի ծախսը 7,32 կգ/վ է: Սառնարանային մեքենայի ճնշակի և շրջանառու պոմպի էլեկտրաէներգիայի ծախսերը սեզոնում կկազմեն. Գյումրիում՝ 36820 կՎտ/սեզ., Երևանում՝ 37853 կՎտ/սեզ., Հրազդանում՝ 26702 կՎտ/սեզ., Վանաձորում՝ 34943 կՎտ/սեզ., Սևանում՝ 25096 կՎտ/սեզ. և Կապանում՝ 37321 կՎտ/սեզ.: Հովացման սեզոնում ևս իրականացվում է համակարգի հիդրավլիկական հաշվարկ: Ըստ սահմանված արագության, որոշվում են շենքի ներքին ցանցի խողովակների տրամագծերը: Հաշվարկների արդյունքում ջերմացրտամատակարարման խողովակների տրամագծերն ըստ քաղաքների կկազմեն՝ Գյումրի, Սևան, Երևան՝ Ø20...110 մմ, Հրազդան, Վանաձոր՝ Ø20...90 մմ, Կապան՝ Ø20...125 մմ (վերջին թվերը ներկայացնում են մայրուղային խողովակների տրամագծերը): Շինություններում հարմարավետ պայմաններ ունենալու համար որպես ջեռուցման և հովացման սարք է ընտրվում ֆանկոյլը՝ ըստ

հովացման բեռնվածության, ապա վերահաշվարկվում ըստ ջեռուցման բեռնվածության, կախված ջերմաստիճանային ռեժիմներից: Սրանց տարբերություններից փոխվում է ֆանկոյլում օդամուղի կողմից ծախսված էլեկտրաէներգիան և հովացման մակերեսը: Ըստ հովացման բեռնվածության շենքում ֆանկոյլների քանակը ստացվել է 162 հատ, երբ ջերմաստիճանային ռեժիմը 5/12 °C է: Այդ դեպքում օդամուղների կողմից էլեկտրաէներգիայի ծախսն ըստ հովացման սեզոնի տարբեր ամիսների տևողության նշված քաղաքներում կկազմի. Երևանում՝ 8329 կՎտժ/սեզ., Գյումրիում՝ 5211 կՎտժ/սեզ., Վանաձորում՝ 5006 կՎտժ/սեզ., Սևանում՝ 3687 կՎտժ/սեզ., Հրազդանում՝ 3562 կՎտժ/սեզ., Կապանում՝ 8653 կՎտժ/սեզ., իսկ երբ դիտարկվում է 10/17 °C ջերմաստիճանային ռեժիմը, ապա ֆանկոյլների քանակը դառնում է 283 հատ: Հովացման սեզոնում 10/17 °C ջերմաստիճանային ռեժիմի դեպքում կպանջվի գրեթե կրկնակի անգամ ավելի նման սարքեր՝ ի հետևանք ջերմափոխանցման գործակցի փոքրացման և օդաքանակի մեծացման, իսկ մյուս կողմից՝ կապիտալ ներդրումների մեծացման: Այնուհետև վերահաշվարկվում է ֆանկոյլների բնութագրերն ըստ ջեռուցման բեռնվածության, կախված ջերմաստիճանային ռեժիմներից՝ 80/60 °C, 60/40 °C, 45/25 °C: Դրա հետևանքով տարբեր կլինեն քանակները և օդամուղի կողմից էլեկտրաէներգիայի ծախսը (աղ. 3):

Աղյուսակ 3

Էլեկտրաէներգիայի ծախսն ըստ ջերմաստիճանային ռեժիմի

Քաղաքներ	Էլեկտրաէներգիայի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 80/60°C ջերմաստիճանային ռեժիմի, կՎտժ/սեզ.	Էլեկտրաէներգիայի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 60/40 °C ջերմաստիճանային ռեժիմի, կՎտժ/սեզ.	Էլեկտրաէներգիայի ծախսը սեզոնի ընթացքում ըստ 45/25 °C ջերմաստիճանային ռեժիմի, կՎտժ/սեզ.
Երևան	10490	10609	10551
Գյումրի	15513	15431	14209
Վանաձոր	12095	12385	13334
Կապան	7511	7498	7700
Հրազդան	14774	14890	14630
Սևան	13615	13942	15010

Արդյունքներ և քննարկում


Շենքի օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի (ՕՋՇ) էներգատնտեսական ցուցանիշների որոշմանը կարելի է հասնել դրանց բազմակողմանի վերլուծության արդյունքում: Սակայն վերջնական պատասխան կարող են տալ տնտեսական ցուցանիշները, ջերմամեկուսիչի և սարքավորումների արժեքները, վառելիքի գինը և այլն: Ստորև անդրադարձ է կատարվել նման հաշվարկներին: Վերը դիտարկված 9 հարկանի բազմաբնակարան շենքի համար նախատեսվել էր իրականացնել արտաքին պատող կոնստրուկցիայի ջերմամեկուսացում, ըստ որի կորոշվեն ջերմացրտամատակարարման համակարգի էներգետիկական և տեխնիկատնտեսական ցուցանիշները, կիրականաց-

վեն դրանց վերլուծությունները: Ինչպես նշվեց, համակարգային վերլուծության համար անհրաժեշտ է որոշել ինչպես շինկառուցվածքների, այնպես էլ ջերմացրտամատակարարման համակարգի վրա հիմնական և շահագործման ծախսերի ամբողջությունը և բերված ծախսերը: Այդ ծախսերը որոշվել են հայտնի բանաձևով [15].


$$Z_{\text{գ. ս}}^{\text{միջ. սեգ.}} = (E_{\text{ջեռ. ս}} + k_{\text{ջեռ. ս}}^{\text{վեր.}}) \cdot K_{\text{ջեռ. ս}} + (E_{\text{կայթ.}} + k_{\text{կայթ.}}^{\text{վեր.}}) \cdot K_{\text{կայթ.}} + (E_{\text{ջերմ.}} + k_{\text{ջերմ.}}^{\text{վեր.}}) \cdot K_{\text{ջերմ.}} + (E_{\text{ջերմ. ցանց}} + k_{\text{ջերմ. ցանց}}^{\text{վեր.}}) \cdot K_{\text{ջերմ. ցանց}} + (E_{\text{գ. աղբ.}} + k_{\text{գ. աղբ.}}^{\text{վեր.}}) \cdot K_{\text{գ. աղբ.}} + c_{\text{վառ.}} \cdot \sum V_{\text{վառ.}}^{\text{միջ. սեգ.}} + c_{\text{էլ. էն.}}^{1\text{կՎտ}} \cdot \sum N_{\text{էլ. էն.}}^{\text{միջ. սեգ.}}, \quad (11)$$

որտեղ $Z_{\text{գ. ս}}^{\text{միջ. սեգ.}}$ -ը տարեկան բերված ծախսերն են \$/տարի, $E_{\text{ջեռ. ս}}$, $E_{\text{կայթ.}}$, $E_{\text{ջերմ.}}$, $E_{\text{գ. աղբ.}}$, $E_{\text{ջերմ. ցանց}}$ -ը շահագործման նորմատիվային գործակիցներ են՝ ջեռուցման սարքի, կաթսայի, ջերմամեկուսիչ նյութի, ցրտի աղբյուրի համար, տարի, $k_{\text{ջեռ. ս}}^{\text{վեր.}}$, $k_{\text{կայթ.}}^{\text{վեր.}}$, $k_{\text{ջերմ.}}^{\text{վեր.}}$, $k_{\text{գ. աղբ.}}^{\text{վեր.}}$, $k_{\text{ջերմ. ցանց}}^{\text{վեր.}}$ -ը սարքավորումների, ջեռուցման կաթսայի, ջերմամեկուսիչի և ցրտի աղբյուրի վերանորոգման ծախսեր են, %, $K_{\text{ջեռ. ս}}$, $K_{\text{կայթ.}}$, $K_{\text{գ. աղբ.}}$, $K_{\text{ջերմ.}}$, $K_{\text{ջերմ. ցանց}}$ -ը՝ ներդրումային արժեքները, $c_{\text{վառ.}} \cdot \sum V_{\text{վառ.}}^{\text{միջ. սեգ.}}$ -ը՝ վառելիքի փաստացի ծախսը, $u^{\beta}/\text{սեգոն}$, $c_{\text{էլ. էն.}}^{1\text{կՎտ}} \cdot \sum N_{\text{էլ. էն.}}^{\text{միջ. սեգ.}}$ -ը՝ էլեկտրաէներգիայի փաստացի ծախսը, $l\text{Վտ}/\text{սեգոն}$, $\sum N_{\text{էլ. էն.}}^{\text{միջ. սեգ.}}$ -ը՝ ջերմատարի և ցրտատարի շրջապտույտն ապահովող պոմպերի ծախսած էլեկտրաէներգիան, ներառյալ շենքի ջեռուցման (հովացման) ներքին ցանցում հիդրավիլիկական կորուստների հաղթահարման վրա էլեկտրաէներգիայի ծախսը, $\sum V_{\text{վառ.}}^{\text{միջ. սեգ.}}$ -ն վառելիքի տարեկան ծախսն է, $u^{\beta}/\text{տարի}$, $c_{\text{էլ. էն.}}^{1\text{կՎտ}}$ -ը՝ ՀՀ էներգահամակարգում վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինն է (0,38 կՎ լարմամբ սնվող սպառողների համար կազմում է՝ ցերեկային սակագին 53,48 $\text{դրամ}/\text{կՎժ}$ (0,13 $\text{\$/կՎտժ}$) գիշերային սակագին 43,48 $\text{դրամ}/\text{կՎտժ}$ (0,11 $\text{\$/կՎտժ}$) [32], $c_{\text{վառ.}}$ - ամսական 10000 u^{β} և ավելի սպառում ունեցող սպառողներին վաճառվող յուրաքանչյուր 1 u^{β} բնական գազի սակագինը, 0,265 $\text{\$}$ [33]: Ըստ այդմ ստացվել են շենքի արտաքին պատող կոնստրուկցիայի օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի հաստության փոփոխության գրաֆիկները համապատասխան կլիմայական պայմանների դեպքում (նկ. 3, 4):

Էքստրուդացված պոլիստիրոլ (XPS) տիպի ջերմամեկուսիչ շերտի առավելագույն հաստություն է պահանջվում Հրագդան քաղաքում՝ 0,12 u , իսկ Կապանի դեպքում, որն ունի ամենաբարձր հաշվարկային ջերմաստիճանը, մեկուսիչի հաստությունը կկազմի 0,08 u (նկ. 3): Գյումրի քաղաքում, երբ արտաքին օդի ջերմաստիճանը զգալիորեն ցածր է և մեծ են ջերմային կորուստները, էքստրուդացված պոլիստիրոլ (XPS) տիպի ջերմամեկուսիչի դեպքում օպտիմալ հաստությունը կազմում է 0,11 u :



Նկ. 3. Օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի հաստությունը, էքստրուդացված պոլիստիրոլ (XPS)



Նկ. 4. Օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի հաստությունը, փրփրապոլիստիրոլ (EPS)

Փրփրապոլիստիրոլի (EPS) տիպի ջերմամեկուսիչի դեպքում կորերն ավելի ողորկ են շնորհիվ նյութի ջերմատեխնիկական հատկությունների փոքր արժեքի, քիչ թեքված են, ուստի և բերում են բերված ծախսերի հաստություն կապի ողորկացման և հաստության աճը չի բերում բերված ծախսերի նշանակալի մեծացման: Կորերի թեքման անկյունը հորիզոնական առանցքի նկատմամբ մեծ է, ջերմամեկուսիչի հաստությունն այս դեպքում տարբեր քաղաքների համար կլինի.

Հրագրան՝ 0,16 լ, Վանաձոր 0,13 լ, Գյումրի՝ 0,15 լ, Երևան և Սևան՝ 0,12 լ, Կապան՝ 0,1 լ: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ օպտիմալ հաստության վրա ազդող հիմնական մեծությունն արտաքին օդի ջերմաստիճանն է նույն շենքի և արտաքին շինարարական կոնստրուկցիայի դեպքում (նկ. 4):

Եզրակացություն

1. ՀՀ տարբեր քաղաքներում ջերմամեկուսիչ շերտի հաստությունը պայմանավորված է դրա տիպով, կլիմայական պայմաններով, հաշվարկային ջերմաստիճանների պահպանման տևողություններով և աստիճան-օրերով:
2. Հաշվի առնելով նշված բոլոր գործոնները՝ XPS տիպի ջերմամեկուսիչը համարվում է առավել նպատակահարմար տարբեր քաղաքներում՝ իր փոքրագույն հաստությամբ ու արդյունավետությամբ, մյուս կողմից մեծ են տարեկան դրամական ծախսերը: EPS-ը պահանջում է ավելի մեծ հաստություն, սակայն փոքր են տարեկան դրամական ծախսերը:
3. Ամռան սեզոնում, օպտիմալ ջերմամեկուսիչ շերտի դեպքում, եթե ցրտամատակարարում չի իրականացվում, ապա վերը բերված կորերը փոխվում են և կստացվի հակառակ պատկեր, քանի որ շինությունների հովացումը բերում է ծախսերի զգալի աճի:

Գրականության ցանկ

- [1] <https://www.unep.org/resources/report/global-status-report-buildings-and-construction>
- [2] Directive 2010/31/EU of the European Parliament and of the Council of 19 May 2010 on the energy performance of buildings
- [3] Directive 2012/27/EU of the European Parliament and of the Council of 25 October 2012 on energy efficiency, amending Directives 2009/125/EC and 2010/30/EU and repealing Directives 2004/8/EC and 2006/32/EC A.M.
- [4] **Papadopoulos, A. Karamanos, A. Avgelis.** Environmental impact of insulating materials at the end of their useful lifetime, ResearchGate (2002) 9 p., <https://www.researchgate.net/publication/237448672>.
- [5] **B. Abu-Jdayil, A-H. Mourad, W. Hittini, M. Hassan, S.Hameedi,** Traditional, state-of-the-art and renewable thermal building insulation materials: an overview. Construct Build Mater 214 (2019) 709–35, <https://doi.org/10.1016/j.conbuildmat.2019.04.102>.
- [6] **Ս.Հ.Սարգսյան,** Մեկուսիչ նյութերի արդյունավետության գնահատումը փորձարարական մեթոդով. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 2 (89) (2024) 110-115, DOI: <https://doi.org/10.54338/18294200-2024.2-13>
- [7] **W. Villasmil, L.J. Fischer, J. Worlitschek,** A review and evaluation of thermal insulation materials and methods for thermal energy storage systems. Renew Sustain Energy Rev 103 (2019)71–84, <https://doi.org/10.1016/j.rser.2018.12.040>.
- [8] **ՀՀՇՆ II-7.02-1995.** Շինարարական ջերմաֆիզիկա. շենքերի պատող կոնստրուկցիաների նախագծման նորմեր. Երևան, 1995, 28 էջ:
- [9] **F. Asdrubali, F. D’Alessandro, S.Schiavoni,** A review of unconventional sustainable building insulation materials. Sustainable Materials and Technologies 4 (2015) 1–17, <https://doi.org/10.1016/j.susmat.2015.05.002>. 2015/07/01/.
- [10] ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
- [11] **N. Pargana, M.D. Pinheiro, J.D. Silvestre, J. de Brito,** Comparative environmental life cycle assessment of thermal insulation materials of buildings. Energy Build 82 (2014) 466–81, <https://doi.org/10.1016/j.enbuild.2014.05.057>

- [12] **Ս.Հ. Սարգսյան, Դ.Ե. Միրունյան**, Ջերմամեկուսիչ նյութերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 3(90) (2024) 116-122, <https://doi.org/10.54338/18294200-2024.3-13>.
- [13] **Huakun Huang, Yijun Zhou, Renda Huang, Huijun Wua, Yongjun Sunc, Gongsheng Huangd, Tao Xua**, Optimum insulation thicknesses and energy conservation of building thermal insulation materials in Chinese zone of humid subtropical climate, <https://doi.org/10.1016/j.scs.2019.101840>.
- [14] **S. Egnatosyan, D. Hakobyan, S. Sargsyan**, Comparative Analysis of the Use of Thermal Insulation Materials Depending on Climatic Conditions and Comfort Microclimate Supply Systems, <https://doi.org/10.4028/www.scientific.net/KEM.906.99>.
- [15] **A. Petrosyan**, The Influence of the Properties of Thermal - Insulation Materials on the Thermomoist Indicators of a Building, <https://doi.org/10.4028/www.scientific.net/KEM.906.125>.
- [16] **Ա.Լ. Պետրոսյան, Ա.Ն. Զաքարյան**, Շինությունների արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսիչ շերտի օպտիմալ հաստությունը ու դրա տեղի որոշումը. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 1 (2015) 43-49:
- [17] **E. Cuce, P. Cuce, C. Wood, S. Riffat**, Optimizing insulation thickness and analysing environmental impacts of aerogel-based thermal superinsulation in buildings. *Energy and Buildings* 77(7) (2014) 28–39, <https://doi.org/10.1016/j.enbuild.2014.03.034>.
- [18] Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիր. ՀՀ Կառավարության 2022 թ. մարտի 24-ի N 398-Լ որոշում:
- [19] RA SC, Housing stock and Public Utility in the Republic of Armenia, p. 75.
- [20] **S. Schiavoni, F.D. Alessandro, F. Bianchi, F. Asdrubali**, Insulation materials for the building sector: A review and comparative analysis, <https://doi.org/10.1016/j.rser.2016.05.045>
- [21] **Dileep Kumar, Morshed Alam, Patrick X.W. Zou, Jay G. Sanjayan, Rizwan Ahmed Memon**, Comparative analysis of building insulation material properties and performance <https://doi.org/10.1016/j.rser.2020.110038>.
- [22] **C.C. Pavel, D.T. Blagoeva**, Competitive Landscape of the EUs Insulation Materials Industry for Energy-Efficient Buildings. Publications Office of the European Union, Luxembourg, 2018, p.19.
- [23] **A. Ali, A. Issa, A. Elshaer**, Comprehensive Review and Recent Trends in Thermal Insulation Materials for Energy Conservation in Buildings, <https://doi.org/10.3390/su16208782>.
- [24] **F. Asdrubali, F.D. Alessandro, S. Schiavoni**, A review of unconventional sustainable building insulation materials, <https://doi.org/10.1016/j.susmat.2015.05.002>.
- [25] **В.Н. Богословский**, Отопление и вентиляция. Москва, 1975, 478 с.
- [26] **ՀՀՇՆ II-22.01-2024**. Շինարարական կլիմայաբանություն. Երևան, 2024, 259 էջ:
- [27] Heating and cooling of buildings. Chapter 16. ASHRE, Available from: <https://www.discountpdh.com/wp-content/themes/discountpdh/pdf-course/heating-and-cooling-of-the-buildings.pdf>.
- [28] **Z. Melikyan**, Heating-Cooling of Buildings: Efficiency of Conventional and Renewable Technologies, 2012, p. 344.
- [29] **ՀՀՇՆ 24.01.2016**. Շենքերի ջերմային պաշտպանություն, Երևան, 2016, 63 էջ:
- [30] **Л.С. Донин**, Справочник по вентиляции в пищевой промышленности. Москва, 1977, 351 с.
- [31] **В.Н. Богословский**, Строительная теплофизика (теплофизические основы отопления, вентиляции и кондиционирования воздуха), Рипол Классик, 1982, 415 с.
- [32] ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. Որոշում № 451-Ն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագներ, 30.12.2024թ.
- [33] ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով. Որոշում №478-Ն «Հալաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագներ, 29.12.2021թ.

ВЫБОР ОПТИМАЛЬНОЙ ТОЛЩИНЫ ТЕПЛОИЗОЛЯЦИОННОГО СЛОЯ ДЛЯ ЖИЛЫХ ЗДАНИЙ В РАЗЛИЧНЫХ ГОРОДАХ РА

Спартак Оганнесович Саргсян*, Арташес Левонович Петросян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

**s.sargsyannuaca@gmail.com*

Зависимость Республики Армения от импорта ископаемого топлива, а именно - природного газа из Российской Федерации, заставляет специалистов разрабатывать и внедрять эффективные меры по сокращению физических объемов импортируемого топлива, а следовательно, и требуемых финансовых ресурсов. Хотя цена на газ в РА низкая по сравнению с мировыми ценами, в условиях низкой платежеспособности населения ей уделяется особое внимание. Поскольку подобные проблемы имеют государственное значение, было проведено исследование по изучению теплотехнических характеристик 9-этажных панельных типовых зданий, построенных и эксплуатируемых в различных климатических зонах РА. Исследование показало, что в разных городах РА в зависимости от климатических условий, теплотехнических данных ограждающих конструкций и стоимости теплоизоляционного материала оптимальной толщиной слоя теплоизоляции будет, в частности, пенополистирол (EPS): Гюмри - 0,15 м, Ереван - 0,12 м, Ванадзор - 0,13 м, Капан - 0,10 м, Севан - 0,12 см, Раздан - 0,16 м и экструдированный пенополистирол (XPS): Гюмри - 0,11 м, Ереван - 0,1 м, Ванадзор - 0,11 м, Капан - 0,08 м, Севан - 0,1 м, Раздан - 0,11 м. В результате, применение теплоизоляционного слоя в строительных конструкциях приводит к значительному сокращению расходов органического топлива и электроэнергии в системах теплоснабжения в течение года. В зависимости от температуры наружного воздуха в летние месяцы, продолжительности сезона, количества градусо-дней затраты в отдельных городах варьируются. Это означает, что при определении оптимальной толщины слоя теплоизоляции необходимо учитывать его влияние на протяжении всего года.

Ключевые слова: *оптимальный слой изоляции, энергосбережение, энергоэффективность, климатические факторы, многоквартирные дома*

SELECTION OF OPTIMUM THICKNESS OF THERMAL INSULATION LAYER FOR RESIDENTIAL BUILDINGS IN VARIOUS CITIES OF RA

Spartak Sargsyan*, Artashes Petrosyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**s.sargsyannuaca@gmail.com*

The dependence of the Republic of Armenia on fossil fuel imports, namely natural gas from the Russian Federation, forces specialists to develop and implement effective measures to reduce the physical volumes of imported fuel, and therefore the required financial resources. Although the price of gas in the Republic of Armenia is low compared to world prices, in the context of low solvency of the population, special attention is paid to it. And since such problems are of national importance, a study was conducted to study the thermal characteristics of 9-story panel typical buildings constructed and operated in various climatic zones of the

Republic of Armenia. The study showed that in different cities of the Republic of Armenia, depending on climatic conditions, thermal engineering data of enclosing structures and the cost of thermal insulation material, the optimal thickness of the thermal insulation layer will be, in particular, expanded polystyrene (EPS) Gyumri 0,15 m, Yerevan 0,12 m, Vanadzor 0,13 m, Kapan 0,1 m, Sevan 0,12 m, Hrazdan 0,16 m and extruded polystyrene (XPS) Gyumri 0,11 m, Yerevan 0,1 m, Vanadzor 0,11 m, Kapan 0,08 m, Sevan 0,1 m, Hrazdan 0,11 m. As a result, the application of insulation layers in construction leads to a significant reduction in the consumption of organic fuels and electricity in heating systems over the course of the year. Depending on the external air temperature during the summer months, the duration of the season, the number of degree-days, the costs in individual cities vary. This means that when determining the optimal thickness of the insulation layer, it is necessary to consider it over the entire year.

Keywords: optimal insulation layer, energy saving, energy efficiency, climatic factors, apartment buildings

Սարգսյան Սպարտակ Հովհաննեսի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, ասպիրանտ, (+374)41014544, s.sargsyannuaca@gmail.com, **Պետրոսյան Արտաշես Լևոնի, տ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոն, (+374)98932940 artashespetrosyan@mail.ru

Саргсян Спартак Оганнесович (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, аспирант, (+374)41014544, s.sargsyannuaca@gmail.com, **Петросян Арташес Левонович, к.т.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теплогазоснабжения и вентиляции, (+374)41014544, artashespetrosyan@mail.ru

Sargsyan Spartak (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, phd student, (+374)41014544, s.sargsyannuaca@gmail.com, **Petrosyan Artashes, doctor of philosophy (Ph.D) in Engineering, Associate Professor** (RA, Yerevan) - NUACA, Chair of ventilation, gas and heat supply, (+374)98932940, artashespetrosyan@mail.ru

Ներկայացվել է՝ 17.02.2025թ.

Գրախոսվել է՝ 28.02.2025թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.04.2025թ.

ԳԱԶՍՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԼԱՐՎԱԾՍՅԻՆ

ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Միհրան Գրիգորի Մտակյան*, Նարինե Վիլիկի Փիրումյան, Անգին Վիկտորի Մարտիրոսյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ***stakyan.mihran@yandex.ru*

Ցույց է տրված, որ գազատրանսպորտային համակարգերի պատասխանատու էլեմենտները հիմնականում աշխատում են ցիկլային լարումների պայմաններում: Էլեմենտների հոգնածային դիմադրությունը որոշելու նպատակով կատարված են հոգնածային փորձարկումներ պողպատյա փորձանմուշներով նշված լարվածային վիճակը գործադրող հատուկ հոգնածային սարքով: Մտացվել են հոգնածային զծերի պարամետրական հավասարումները, որոնցով էլ որոշվել են սահմանային լարումները ցիկլերի ողջ միջակայքում: Եռաչափ կոորդինատային համակարգում կառուցվել են սահմանային լարումների մակերևույթները և բացահայտվել է շոշափող լարումների ազդեցությունը նույն ցիկլերի սահմաններում: Գումարային արդյունքով շոշափող լարումները միաժամանակ նախաձեռնում են երկու հակադարձ գործողություններ, որոնց վերջնական արդյունքը կախված է ցիկլերի թվից և լարումների կուտակման աստիճանից: Առաջարկված է ստեղծել նոր հաշվարկային մեթոդ փոփոխական բեռնվածության դեպքում հոգնածային դիմադրության պարամետրերի գնահատման, ինչպես նաև սահմանային լարումների և երկարակեցությունների որոշման համար:

Բանալի բառեր. գազատրանսպորտային համակարգ, ցիկլային երկարակեցություն, սահմանային լարումների մակերևույթներ, չբայթայման հավանականության մակարդակ

Ներածություն

Գազատրանսպորտային համակարգերում (ԳՏՀ) նվազագույն զանգվածի ապահովումը պահանջում է լիովին օգտագործել դրանց կրողունակության գոյապաշարը, որը զգալիորեն բարձրացնում է նշված համակարգում էլեմենտների աշխատանքային հատվածքների լարվածությունը: Ազդող արտաքին գործոնները, որպես կանոն, հավանական բնույթ են կրում, իսկ օգտագործված նյութերի ֆիզիկամեխանիկական բնութագրերին բնորոշ է արժեքների որոշակի ցրում: Այս կապակցությամբ ամրության և երկարակեցության ավանդական հաշվարկների փոխարեն անհրաժեշտ է կիրառել բեռնվածքների ազդման և նյութերի հոգնածային քայքայման ընթացքը հավանական հիմքով ձևակերպված արդի հաշվարկներ: Ֆիզիկամեխանիկական բնութագրերի վրա տարբեր տևողությամբ և համաժամությամբ ազդող բազմազան գործոնները դժվարացնում են համապիտանի և գիտականորեն հիմնավորված հաշվարկային մեթոդիկայի ստեղծումը, որը թույլ կտա դեռևս նախագծման փուլում հաշվի առնել յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը և հավանական տեսակետից կանխատեսել պատասխանատու էլեմենտների ամրությունը և երկարակեցությունը [1-3]: Այդ պատճառով էլ հիմնավորվում է մեխանիկական փորձարկումների առավելագույնս մոտեցումը համակարգի իրական աշխատանքային պայմաններին և պատասխանատու էլեմենտների հաշվարկային մեթոդի կատարելագործումը:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտվող էլեմենտների վրա տարաբնույթ, բայց միաժամանակ ազդող մի քանի գործոնների փոխկապակցությունը, որով ձևավորվում է հոգնաձային քայքայման գործընթացը, ի վերջո հանգեցնում է կոորդինատային համակարգում ցիկլային երկարակեցությունների ցրման դաշտի չափերի և թեքության փոփոխականությանը, որոնց միջոցով էլ կարելի է իրականացնել քանակական գնահատման չենթարկվող գործոնների ընդգրկումը հաշվարկային ընթացակարգում:

Աշխատանքի նպատակը փոփոխական բարդ բեռնվածության դեպքում ԳՏՀ-ի էլեմենտների ամրության և երկարակեցության հաշվարկային մեթոդների կատարելագործումն է, որը ներառելու է բեռնվածության ռեժիմների հավանական գնահատումը, իրական աշխատանքային պայմանները նմանակող լաբորատոր փորձարկումներով ստացված հոգնաձային դիմադրության ցուցանիշների ստացումը, հարաբերական ամրության և երկարակեցության գործակիցների ֆունկցիաների դուրսբերումը:

Աշխատանքի խնդիրներն են.

- ԳՏՀ էլեմենտների փոփոխական բարդ բեռնվածության բնութագրիչ ռեժիմի ընտրությունը, դրա պարամետրերի որոշումը և հավանական գնահատումը,
- էլեմենտների իրական ռեժիմները նմանակող հոգնաձային փորձարկումներով շոշափող լարումների ուսումնասիրման միջակայքի ընդլայնումը և ստացված հոգնաձային դիմադրության ցուցանիշների հավանական գնահատումը,
- նշված ցուցանիշների և հոգնաձային քայքայման գործընթացի վրա ազդող գործոնների պարամետրերի միջև կոռելյացիոն կապերի դուրսբերումը:


Համալիր փորձարարական-տեսական հետազոտության շրջանակներում քննարկվող խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հավանականությունների տեսության և մաթ. վիճակագրության մեթոդներ [4, 5]: Կոնստրուկցիոն էլեմենտների համար ստացված սահմանային լարումների մակերևույթները ներկայացված են գծային կոռելյացիոն հավասարումների համակարգի տեսքով, իսկ էլեմենտների հոգնաձային դիմադրության ցուցանիշների վրա տարաբնույթ գործոնների ազդեցությունը գնահատելու համար կիրառված է երկարակեցությունների ցրման դաշտերի համեմատման մեթոդը, որն իրականացվել է քվանտիլային հոգնաձային կորերի ընտանիքների հավասարումների համատեղ լուծման եղանակով: Հոգնաձային փորձարկումների համար անհրաժեշտ սարքավորումը և կիրառված փորձարարական մեթոդիկան առավելագույն մոտեցված են էլեմենտների իրական աշխատանքային ռեժիմներին [6]:

Արդյունքներ և քննարկում

Նկարագրված են էլեմենտների հոգնաձային փորձարկումների կազմակերպման և փորձարարական տվյալների մշակման մեթոդները: Դիտարկված են փորձանմուշների վտանգավոր հատվածքներում բարդ լարվածային վիճակ ստեղծող և փակ ուժային եզրագծի սկզբունքով

աշխատող հոգնաձային մեքենայի կինեմատիկական սխեմայի առանձնահատկությունները, դրա չափաբերման եղանակները և դինամիկական հաշվարկը:

Հետազոտության համար հիմք են ծառայել պողպատից պատրաստված հարթ (Γπ) և լարումների կուտակիչներով օժտված (Γ-կլորացում, Մ-մակերևութային կոնական փոսիկ, ΓO-և CO-խուլ և միջանցիկ շառավղային անցքեր), փորձանմուշների հոգնաձային փորձարկումների արդյունքները (5 շարք փորձանմուշների 25 խմբաքանակներ, յուրաքանչյուրում $n = 17 \dots 22$ փորձարկումներ) (նկ. 1):



Նկ. 1. Փորձանմուշների կառուցվածքը. ա - հարթ (Γπ), բ - կլորացումով (Γ), գ - կոնական փոսիկով (Մ), դ - շառավղային խուլ անցքով (ΓO), ե - շառավղային միջանցիկ անցքով (CO)

Փորձարկումների արդյունքները մշակված են հոգնաձային գործընթացներին բնորոշ վիճակագրական մեթոդներով, համաձայն որոնց հոգնաձային կորի մաթեմատիկական մոդելը հետևյալն է՝

$$lgN = C - mlg\sigma, \tag{1}$$

որտեղ $C = m\overline{lg\sigma} + (\overline{lgN} + z_p s_{lgNr})$, $m = \overline{m} + z_p s_m$, $\tag{2}$

$$s_{lgNr} = s_{lgN} \sqrt{(n-1)(1-r^2) / (n-2)}, \quad s_m = s_{lgN} / s_{lg\sigma} [\sqrt{(n-2) / (n-1)}], \tag{3}$$

r -ը կոռելյացիայի գործակիցն է, իսկ s_{lgN} , $s_{lg\sigma}$ -ն՝ երկարակեցությունների և լարումների լոգարիթմական միջին քառակուսային շեղումները, z_p -ն՝ նորմալ բաշխման ֆունկցիայի քվանտիլը: (1) - (3)-ի պարամետրերը տրված են աղ. 1 և 2-ում:

Հոգնածային կորերի պարամետրերի հավանական արժեքները

Փորձանմուշի տեսքը	P(N)	Պարամետր	m – ի և C - ի արժեքները, երբ $\tau/\sigma =$									
			0,0	0,6	0,8	1,0	1,2	1,4	1,65			
1	2	3	4	5	6	7	8	9	10			
Հարթ (Γπ)	0,10	m	17,2757	14,8668	15,0738	14,6508	18,1847	20,3247	36,8052			
		C	48,8226	42,6370	42,8865	41,5288	49,6800	54,6994	94,9628			
	0,50	m	15,6789	13,6542	14,0143	13,6490	16,8539	18,6392	35,3413			
		C	44,5707	39,3743	40,0372	38,8583	46,2294	50,3393	91,2281			
	0,90	m	17,0822	12,4416	12,9548	12,6472	15,5230	16,9538	33,8773			
		C	40,3187	36,1115	37,1879	36,1877	42,7788	45,9792	87,4935			
	0,99	m	12,7819	11,4241	12,0921	11,8314	14,4393	15,5812	32,6852			
		C	36,8561	33,4545	34,8675	34,0129	39,9688	42,4286	84,4521			
	0,999	m	11,8303	10,7314	11,4607	11,2343	13,6461	14,5767	31,8128			
		C	34,3221	31,5101	33,1695	32,4214	37,9125	39,8303	82,2265			
	Կոնական փոսիկով (Π)	0,10	m	5,0074	5,2971	6,0152	6,2340	7,8673	---	---		
			C	17,7092	18,3046	19,8395	20,2412	23,6954				
0,50		m	4,3750	4,6830	5,3398	5,7001	7,1576					
		C	16,1468	16,7850	18,1510	18,9129	21,8995					
0,90		m	3,7427	4,0689	4,6645	5,1662	6,4479					
		C	14,5844	15,2655	16,4625	17,5845	20,1036					
0,99		m	3,2277	3,5687	4,1145	4,7315	5,8699					
		C	13,3121	14,0280	15,0875	16,5028	18,6411					
0,999		m	2,8508	3,2028	3,7121	4,4133	5,4470					
		C	12,3810	13,1224	14,0812	15,7111	17,5708					
Շառավղային խուլ անցքով (ΓO)		0,10	m	8,2812	9,1950	7,6113	7,2612	5,7269			---	---
			C	24,7051	26,6443	22,6519	21,5117	18,1372				
	0,50	m	7,5498	8,3538	7,0504	6,8581	5,3096					
		C	22,9265	24,5659	21,2332	20,5055	17,0493					
	0,90	m	6,8184	7,5127	6,4896	6,4550	4,8923					
		C	21,1479	22,4874	19,8145	19,4994	15,9615					
	0,99	m	6,2228	6,8277	6,0328	6,1267	4,5525					
		C	19,6995	20,7949	18,6592	18,6800	15,0755					
	0,999	m	5,7870	6,3264	5,6986	5,8864	4,3038					
		C	18,6396	19,5562	17,8137	18,0804	14,4272					
	Շառավղային միջանցիկ անցքով (CO)	0,10	m	6,5808	6,6391	4,7846	5,5293	---	---	---		
			C	19,8105	19,1029	15,5276	16,5392					
0,50		m	6,1585	6,0667	4,4239	5,2569						
		C	18,7596	17,7969	14,6323	15,8935						
0,90		m	5,7362	5,4944	4,0633	4,9845						
		C	17,7086	16,4909	13,7370	15,2477						
0,99		m	5,3923	5,0283	3,7695	4,7627						
		C	5,3923	5,0283	3,7695	4,7627						
0,999		m	5,1406	4,6872	3,5546	4,6003						
		C	16,2265	14,6491	12,4744	14,3371						

Աղյուսակի շարունակություն

1	2	3	4	5	6	7	8	9	10
Կլորացումով (Γ)	0,10	<i>m</i>	7,3608	6,4645	5,7973	6,3505	---	---	---
		<i>C</i>	23,1206	20,8717	19,0286	19,6420			
	0,50	<i>m</i>	6,4233	5,6795	5,1520	5,8802			
		<i>C</i>	20,8201	18,9190	17,4143	18,4711			
	0,90	<i>m</i>	5,4857	4,8944	4,5103	5,4099			
		<i>C</i>	18,5195	16,9664	15,8000	17,2701			
	0,99	<i>m</i>	4,7222	4,2551	3,9877	5,0269			
		<i>C</i>	16,6461	15,3762	14,4854	16,2921			
0,999	<i>m</i>	4,1635	3,7872	3,6053	4,7466				
	<i>C</i>	15,2751	14,2126	13,5234	15,5764				

Աղյուսակ 2


Փորձարարական տվյալների վիճակագրական մշակման արդյունքները


Փորձանմուշի տեսքը	τ / σ	<i>n</i>	<i>S_C</i>	<i>S_m</i>	<i>S_{lgNr}</i>	<i>r</i>	$\overline{\sigma_{-1r}},$ <i>ՄՊա</i>	$\overline{N}_G \cdot 10^6$
1	2	3	4	5	6	7	8	9
Հարթ (Γπ)	0,0	19	3,3166	1,2455	0,2455	0,9476	267	3,3113
	0,6	19	2,5452	0,9459	0,9459	0,9594	258	2,6915
	0,8	22	3,2225	0,8264	0,8264	0,9654	255	1,9953
	1,0	19	2,0831	0,7814	0,7814	0,9717	238	2,7542
	1,2	18	2,6915	1,0381	1,0381	0,9692	233	2,0893
	1,4	17	3,4009	1,3147	1,3147	0,9624	233	1,6596
	1,65	19	2,9131	1,1419	1,1419	0,9907	248	3,9811
Կռուկան փոսիկով (Մ)	0,0	17	1,2188	0,4933	0,0952	0,9116	160	3,1623
	0,6	17	1,1852	0,4790	0,0923	0,9255	158	3,1623
	0,8	17	1,3171	0,5268	0,1209	0,9302	153	3,3113
	1,0	17	1,0363	0,4165	0,0963	0,9599	150	3,3885
	1,2	19	1,4009	0,5536	0,1498	0,9502	138	3,5481
Շառավղային խուլ անցքով (ՂՕ)	0,0	17	1,3874	0,5705	0,1204	0,9572	143	4,6774
	0,6	17	1,6214	0,6562	0,1582	0,9540	138	4,2658
	0,8	17	1,1067	0,4375	0,1396	0,9706	118	4,6774
	1,0	17	0,7850	0,3145	0,1090	0,9836	108	3,6308
	1,2	18	0,8486	0,3255	0,1511	0,9695	93	3,7154
Շառավղային միջանցիկ անցքով (ՂՕ)	0,0	19	0,8197	0,3294	0,1339	0,9752	88	6,6069
	0,6	16	1,0196	0,4465	0,1389	0,9617	70	3,9811
	0,8	17	0,6983	0,2813	0,1427	0,9692	65	4,1687
	1,0	16	0,5037	0,2125	0,0907	0,9880	60	3,4674
Կլորացումով (Γ)	0,0	17	1,7947	0,7314	0,1325	0,9101	160	4,4668
	0,6	18	1,5232	0,6124	0,1383	0,9138	150	3,5075
	0,8	17	1,2593	0,5006	0,1333	0,9321	140	2,1627
	1,0	18	0,9369	0,3669	0,1169	0,9685	120	1,8197

Այդ արդյունքները մշակված են լոգարիթմական նորմալ բաշխման օրենքի վրա հիմնված՝ երկչափ գծային կոռելյացիոն վերլուծության մեթոդներով: Հոգնաձային քվանտիլային կորերի պարամետրերի նշանակալիությունը ստուգված է Ֆիշերի, Ստյուդենտի և Սպիրմենի համաձայնության չափանիշներով [4, 5]:

Դիտարկված են ԳՏՀ էլեմենտների բեռնվածության ռեժիմների առանձնահատկությունները: Առանձնացված է կայունացված կամ դրան մոտ ռեժիմը՝ համատեղ ցիկլային ծոմամբ և հաստատուն ոլորմամբ, որը վտանգավոր հատվածքներում առաջացնում է σ_1 և σ_3 գլխավոր լարումների անհամաչափ ցիկլեր: Նշված ռեժիմի առանձնահատկությունը՝ դա դիտարկվող էլեմենտի համար նոմինալ շոշափող և նորմալ լարումների հարաբերությունն է, որը փոփոխվում է, կախված էլեմենտի եզրագծից և մեխանիզմի կինեմատիկական շղթայում գրաված դիրքից [7, 8]:

Էլեմենտներում լարումների կուտակիչները, τ և σ լարումների անհավասարաչափ աճ են առաջացնում, իսկ շատ դեպքերում էլ τ_{max} և σ_{max} -ի ազդման հատվածքները չեն համընկնում: Համալիր վիճակագրական հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ τ/σ -ն օժտված է որոշակի հայտանիշներով և դրա միջնարժեքային մեծությունները կարելի է օգտագործել որպես փոփոխական բարդ բեռնվածության ռեժիմային պարամետրեր (նկ. 2):





Նկ. 2. Փորձանմուշների սահմանային լարումների մակերևույթները.

ա - հարթ (Tπ), բ - կոնական փոսիկով (Մ), գ - շառավղային խուլ անցքով (ՂՕ), դ - շառավղային միջանցիկ անցքով (ՎՕ), ե - կլորացումով (Ղ):

1, 2 և 3 մակերևույթները համապատասխանում են $P(N) = 0, 1, 0,5$ և $0,999$ չքայքայման հավանականության մակարդակներին

Քննարկվել են հարթ և լարումների կուտակիչներ ունեցող փորձանմուշների հոգնածային փորձարկումների արդյունքները, որոնց միջոցով յուրաքանչյուր խմբաբանակի համար որոշված են հոգնածային դիմադրության միջին և ցրվածքային ցուցանիշները, ինչպես նաև քվանտիլային հոգնածային կորերի պարամետրերը չքայքայման հավանականության $P(N)=0,1...0,999$ միջակայքում: Կառուցված են էլեմենտների սահմանային լարումների մակերևույթների ընտանիքները

(նկ. 2), որոնք բազմացիկլային հոգնածության տիրույթում σ_i գերլարումների տարբեր մակարդակներով ցուցադրում են τ շոշափող լարումների տարաբնույթ ազդեցությունը դիմացկունության սահմանային արժեքների վրա: Այն արդյունք է միաժամանակ ընթացող գործընթացների՝ մակերևութային շերտերի լարվածության աճի (*I*) և առաձգապլաստիկ ոլորումից առաջացած ամրացման (*II*) պայմաններում:

I գործընթացի ազդեցությունը գերակշռում է *II-ին*, քանի որ վերջինիս ամրացնող գործոնը զգալիորեն ցածր է հայտնի ամրացնող տեխնոլոգիաների կիրառման արդյունքից և այն զգալի է դառնում միայն բարձր գերլարումների կամ $\tau/\sigma = 1,40 \dots 1,65$ -ի դեպքում: Հարթ փորձանմուշների համար *I* և *II* գործընթացների համատեղ ազդեցությունը $\tau/\sigma = 0 \dots 1,65$ միջակայքում հանգեցնում է դիմացկունության սահմանների նախնական նվազման, իսկ հետագայում՝ $\tau/\sigma = 1,65$ -ի դեպքում հասնելով համարյա մինչև ելակետային արժեքները (նկ. 2 ա, բ):

Լարումների կուտակման առկայությունը հանգեցնում է կուտակիչի սահմաններում *I* գործընթացի տեղայնացմանը և հոգնածային քայքայման օջախի կենտրոնացմանը, որի պատճառով դիտարկված լարումների կուտակիչների բոլոր տեսակների դեպքում ամրության վերականգնում չի դիտվում, իսկ նվազումն ավելի արագ է ընթանում (նկ. 2 գ, դ, ե), քան հարթ փորձանմուշների համար: Այս գործընթացն էական է առավել սուր լարումների կուտակիչների դեպքում:

Փորձանմուշների կառուցվածքային ձևերից և τ արժեքներից կախված՝ $N = 10^4 \dots 10^7$ ցիկլերի տիրույթում դիմացկունության սահմանների փոփոխման ոչ նույնական բնույթը, ինչպես նաև փորձարկումների տվյալների բնական ցրունից σ_{RN} -ի փոփոխակումն ամրության հայտնի տեսություններում նկարագրված չեն [1-3]: Եթե փոփոխական բարդ լարվածային վիճակում ամրության հաշվարկների կատարման համար գոյություն ունեն մոտավոր մեթոդներ, ապա ցիկլային երկարակեցության ճշգրտված հաշվարկների համար այդպիսիք ընդհանրապես չկան, քանի որ որոշված չի N – ի կապի բնույթը կոնստրուկցիոն, տեխնոլոգիական և շահագործական գործոններից: Մա դժվարացնում է վնասված էլեմենտների վերանորոգման և փոխարինման հիմնավորված ժամկետների նշանակումը կամ էլ ծառայության ժամկետում ԳՏՀ-ի նվազագույն զանգվածի ապահովումը:

